Ազգ
Azg

4 ՓԵՏՐՈՒԱՐ 2011 ՈՒՐԲԱԹ 18(4637)

ISSN: 1829-1651
9 771829 165003 11018

# Մայր բջիջներ՝ սաղմին բնորոշ հատկանիշներով

Հարվարդի համալսարանի մի խումբ գիտնականներ աննախադեպ նոր մեթոդ են հայտնաբերել ստեղծելու մայր բջիջներ, որոնք ունեն իրենց սաղմի բնորոշ հատկանիշները: Նրանց հավաստմամբ՝ այս մեթոդով կկարողանան վերականգնել հիվանդների քայքայված օրգանները, օրինակ՝ շաքարախտով հիվանդի ենթաստամոքսային գեղձը:

Ըստ լրատվության հեղինակ, «Շուկայական հարաբերությունների եվրոպական ինստիտուտի» նախագահ Կլեմենս Ֆերրերի՝ կատարված հետազոտությունը պաշտպանություն է գտել «Մ. Նահանգների գիտության եւ նորարարության նախարարության», բայց ոչ կառավարության կողմից:

Մյուս կողմից, «Լա պլանա դը Վիլա-Ռեալ հիվանդանոցի» բժիշկներից, արյունաբանության հետազոտությունների համակարգող դոկտոր-պրոֆեսորը հաստատել է, որ նման մայր բջիջների ստեղծումը արդյունավետ կարող է լինել քաղցկեղային հիվանդությունների բուժման դեպքում:

Ճապոնիայի «բարձրագույն տեխնոլոգիաների եւ արդյունաբերական գիտությունների ազգային ինստիտուտի» գիտնականները նույնպես հայտնագործել են մայր բջիջների ստեղծման վերոնշյալ մեթոդը:

Հ. Ծ.

# «Մեր օրենսդրության հիմունքները բացառում են ազգային, կրոնական եւ ռասայական խտրականությունը»

## *Հարցեր ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանին*

***Սովորաբար մեր մամուլն Արցախի առաջնորդներին դիմում է հատուկ-հանդիսանքային առիթներով ինչ-որ ընդհանուր հայտարարություններ կամ կարծիք ստանալու համար: Դրա համար պետք է մեղադրել ոչ միայն մամուլը, այլեւ Արցախի ղեկավարությանը, որ, մեր կարծիքով, անհրաժեշտ ակտիվություն չի ցուցաբերում այս հարցում, «հինգնդրեւորվելու» սողանք թողնելով երբեմն ոչ կոմպետենտ տարբեր տրամաչափի «քաղաքագետների» համար: «Ազգը» որոշել է պարբերաբար եւ համապատասխան հարցարաններով դիմել ԼՂՀ ղեկավարներին ու նրանց չմիջնորդավորված տեսակետները ներկայացնել ընթերցողին: Շարքը սկսում ենք ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանից, որին ուղղված հարցարանը կազմել են մեր թերթի լրագրողները:***



**- «Ֆրիդոմ Հաուզ» ամերիկյան ոչ կառավարական կազմակերպությունը ԼՂ-ն «ոչ ազատ» պետությունների շարքում էր դասել: Դրա համար գուցե ազդակ էր նաեւ, որ ԼՂ խորհրդարանում խստորեն ընդդիմություն չկա: Ինչ-որ քայլեր անելու փորձեր արվո՞ւմ են՝ զեկույցում նշված գործոնները չեզոքացնելու ուղղությամբ:**

- Արցախում ժողովրդավար պետություն կառուցվում է ոչ թե որեւէ մեկին հաճոյանալու, այլ՝ որ դա մեր ժողովրդի ընտրությունն է: Իհարկե, ցանկալի կլիներ, որ այդ ջանքերը նաեւ տեսանելի լինեին միջազգային կառույցների կողմից: Ափսոսանքով պետք է ասեմ, որ նման դիտարկումը բացակայում է, իսկ տարին մեկ առանց ուսումնասիրությունների որոշակի եզրակացություն տալը չի կարող արժանահավատություն եւ վստահություն ներշնչել: Մեկ տարվա ընթացքում մեզ մոտ եթե ինչ-որ բան փոխվել է, ապա միայն՝ դրականորեն: Իսկ արհեստական քայլերի, մանավանդ՝ իշխանությունների նախաձեռնած, կարիք չեմ տեսնում: Արցախի ժողովուրդն ու քաղաքական ուժերն իրենք են որոշում «դիմության» եւ ընդդիմության հարցը: Բոլոր դեպքերում գերակա է այն, ինչ դրսեւորվում է ժողովրդի կամքի ազատ արտահայտությամբ:

**- Ինչպիսի՞ միջխորհրդարանական կապեր է հաստատել Արցախի Հանրապետության խորհրդարանը: Օրենսդիր մարմինների մակարդակով ի՞նչ հարաբերություններ են ձեւավորվել չճանաչված մյուս երկրների հետ եւ ի՞նչ ոլորտներում, եթե այդպիսի համագործակցություն կա: Եվ ի՞նչ ձեւաչափեր կան միջազգային կառույցների մակարդակով, որտեղ Արցախի խորհրդարանը կարող է իր մասնակցությունը բերել:**

- Մեզ համար համագործակցության ամենակայացած հարթակը Արցախ-Հայաստան միջխորհրդարանական հանձնաժողովի գործունեությունն է: Մենք ավանդական կապեր ունենք Աբխազիայի, Մերձդնեստրի եւ Հարավային Օսիայի խորհրդարանների հետ: Փոխգործակցության հիմնական թեման նրանց հետ օրենսդրական աշխատանքի փորձի փոխանակումն է:

*Տես էջ 5*

«ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՍԵՆԱՏ»

# Հայտարարություն

ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի Լոս Անջելեսում կատարած հայտարարությունը՝ «Սփյուռքյան սենատի» ստեղծման մասին, տարաբնույթ մեկնաբանությունների եւ կարծիքների առիթ տվեց: Նման տարընթերցումները եւ տարբեր մեկնաբանությունները պայմանավորված են այն փաստով նաեւ, որ հայտարարությունը կատարել է կառավարության ներկայացուցիչը, ինչը նշանակում է, որ այն պետք է որ արդեն մշակված առաջարկ լիներ, այլ ոչ տեսական մտորումներ: Այնինչ իրականում դա ընդամենը գաղափար է, որի շուրջը դեռ պետք է փորձագիտական կարծիքներ հնչեն:

Պարզ է մի բան, կառավարության ներկայացուցչի բարձրաձայնած գաղափարը միայն տարակարծությունների ալիք է բարձրացրել, քանի որ այն ինչ-որ տեղ հակասության մեջ է մտնում Սփյուռքում վաղուց արդեն շրջանառվող կազմակերպչական նոր կառույցի ստեղծման գաղափարին եւ տարբեր նախաձեռնություններին:

Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցությունը կարծում է, որ նմանատիպ պատասխանատու հայտարարությունից առաջ Հայաստանի կառավարությունը նախ պետք է խորհրդակցեր սփյուռքյան ավանդական կառույցների եւ կազմակերպությունների հետ, որոնք նմանատիպ աշխատանքների հարուստ փորձ ունեն:

Կուսակցությունն ընդհանուր առմամբ կողմ լինելով համասփյուռքյան մարմնի ստեղծման գաղափարին, այնուամենայնիվ կարծում է, որ չմշակված եւ ոչ ժամանակին արված հայտարարությունը ոչ միայն կարող է վարկաբեկել այդ գաղափարը, այլեւ ավելորդ ու անտեղի լարվածություն առաջացնել ՀՀ-ի եւ Սփյուռքի միջեւ եւ Սփյուռքի ներսում:

Բավական ժամանակ է, ինչ Սփյուռքում եւ Մայր հայրենիքում քննարկումներ են տեղի ունենում համասփյուռքյան ներկայացուցչական մարմնի ստեղծման գաղափարի շուրջը եւ ՀՀ իշխանությունները պետք է ականջալուր լինեն այդ քննարկումներին, դրանք ավելի ընդգրկուն դարձնեն եւ այդ գործընթացում ներգրավեն ոչ միայն փորձառու մասնագետների, այլեւ համապատասխան կառույցների ներկայացուցիչներին:

**Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչություն**

# Նախագահը մեկնում է Գերմանիա

Նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը այսօր՝ փետրվարի 4-ին աշխատանքային այցով մեկնում է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ անվտանգության քաղաքականության հարցերով մյունխենյան համաժողովին մասնակցելու:

Հ. Ա.

# Մինսկի խումբը դժգոհ է ԵԽԽՎ ԼՂ հարցով ենթահանձնաժողովի առումով

Ինչպես տեղեկանում ենք դիվանագիտական աղբյուրներից, ԵԽԽՎ բյուրոյի ընդունած որոշումը՝ վերականգնել ԼՂ հարցով ենթահանձնաժողովը, շարունակում է մնալ հակասական բուն ԵԽԽՎ-ում, քանի որ այդ որոշումը հակասում է ղարաբաղյան բանակցություններում միջնորդ պետությունների բազմաթիվ կոչերին՝ հեռու մնալ այլ կազմակերպությունների այնպիսի գործողություններից, որոնք կարող են պոտենցիալ կերպով վնաս հասցնել բանակցային գործընթացին: Հիշեցնենք՝ այս կապակցությամբ ամենաթարմ ելույթը ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովն ունեցավ, որը հունվարի 13-ին կայացած իր ասուլիսում խոսեց առկա ձեւաչափով ընթացող բանակցային գործընթացին չխանգարելու կարեւորության մասին: Հենց այս պատճառով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներից՝ ԵԽԽՎ անդամներ Ռուսաստանն ու Ֆրանսիան իրենց դժգոհությունն են հայտնել բյուրոյի որոշման հետ կապված: Ռուսաստանն ու Ֆրանսիան ընդգծել են, որ ղարաբաղյան գործընթացին ակնհայտորեն վնասող որոշում ընդունելուց հետո այդ որոշման բացասական հետեւանքների պատասխանատվությունն ամբողջովին ընկնում է ԵԽԽՎ բյուրոյի վրա: Մինսկի խմբի եվրոպացի համանախագահները նաեւ կոչ են արել ԵԽԽՎ ղեկավար մարմնին՝ հարգանքով վերաբերվել բանակցային գործընթացի առկա բնույթին ու ձեւաչափին եւ դրան մոտենալ հասունության զգացումով: Իսկ ղարաբաղյան հիմնահարցի բանակցությունների մանրամասներին չտիրապետող քաղաքական գործիչների կողմից հանրային քննարկումները չեն կարող որեւէ իմաստալից աջակցություն լինել գործընթացի համար:

Հ. Ա.

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Հակոբ Հակոբյանի մտորում-արձագանքը՝ որպես ծոն հայ կնոջ, հալեպաբնակ Հրազդան Թոփաջյանի «Մարաշի ասեղնագործությունը» գիրք-ալբոմին եւ երեւանյան անցած տարվա վերջերին կայացած նույնաբովանդակ ցուցահանդեսին:

Անցյալի էջերից՝ 1948-ի ստալինյան ճամբարից նոր Երեւան վերադարձած երկու աքսորականների՝ Գուրգեն Մահարու եւ Վահրամ Ալազանի հերթական հալածանքները, այս անգամ... թարգմանական աշխատանքների համար-որպես քաղաքական հանցանք:

Քննական երկու անդրադարձ՝ վերջերս լույս տեսած երկու գրքերին. Արգամ Այվազյանի վերաբերմունքը «Նախիջեւան. պատմական եւ արդի շրջանի որոշ հիմնահարցեր» հոդվածների ժողովածուի հայերեն տարբերակին: Լեւոն Սարգսյանի մի քանի նկատառումները 11-րդ դասարանի հումանիտար հոսքի «Հայոց պատմություն» դասագրքի վերաբերյալ:

Մեր հանդիպումը փարիզաբնակ օպերային երգիչ, ծնունդով գյումրեցի Մուրադ Ամիրխանյանի հետ:

Ս. Բ.

# «Ընտրություններից հետո Թուրքիայում օրակարգ կմտնի Հայաստանի հետ սահմանի բացման հարցը»

## *Թուրք փորձագետների այս կանխագուշակումը նպատակ է հետապնդում սահմանափակելու Էրդողանի կուսակցության հաղթանակի հավանականությունը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Տարածաշրջանում տեղի ունեցող բուռն զարգացումները հղի են անկանխատեսելի հետեւանքներով: Խոսքը հատկապես վերաբերում է Եգիպտոսին՝ նկատի առնելով արաբական աշխարհում նրա առաջատար դիրքը, առանցքային դերը ԱՄՆ-ի Մերձավորարեւելյան քաղաքականության մեջ եւ Իսրայելի ազգային անվտանգության հարցում ստանձնած պարտավորությունները: Այս ամենի հետեւանքով Եգիպտոսի զարգացումները կարեւոր նշանակություն են ձեռք բերում արաբական աշխարհի, տարածաշրջանի երկրների, ԱՄՆ-ի եւ Իսրայելի համար:

Այլ կերպ, Եգիպտոսում ընթացող զարգացումներով կանխորոշվում է ոչ միայն երկրի, այլեւ ողջ տարածաշրջանի քաղաքական ճակատագիրը: Ինչ վերաբերում է նախագահ Մուբարաքին, ապա նրա ճակատագիրն էլ կախված է բանակի դիրքորոշումից, հատկապես այն դեպքում, երբ նախագահի կողմնակիցների եւ ցուցարարների բախումները հանգել են արյունահեղության:

Ո՞ւմ կպաշտպանի բանակը. Մուբարաքի՞ն, թե՞ ընդդիմությանը՝ ցույց կտա ժամանակը: Բայց որ անկախ Մուբարաքի իշխանության պահպանման կամ տապալման հանգամանքից, անկայունությունը Եգիպտոսում, հետեւաբար եւ տարածաշրջանում դեռ երկար ժամանակ կպահպանվի, կասկած չի հարուցում: Թեեւ Թուրքիային հակակառավարական խռովություն չի սպառնում, սակայն անկայունությունը սպառնալիքի տակ է դնում տարածաշրջանում առանցքային դեր խաղալու եւ տարածաշրջանային գերտերություն դառնալու նրա հաշվարկները: Ուստի եւ միանգամայն տրամաբանական է Թուրքիայի՝ տարածաշրջանում ընթացող զարգացումներից բխող անհանգստությունը:

Թվում էր, թե այդ զարգացումներով պայմանավորված անհանգստությունը Թուրքիայի օրակարգից պետք է հաներ Հայաստանի հետ հարաբերությունների խնդիրը: Սակայն Haberx.com կայքէջում «Ընտրություններից հետո հնարավոր է, որ օրակարգ մտնի Հայաստանի սահմանի բացումը» վերնագրով փետրվարի 2-ին հրապարակված հոդվածը գերազանցեց ենթադրությունները: Խոսքը Թուրքիայի ազգային մեծ ժողովի առաջիկա հունիսին նախատեսվող ընտրությունների մասին է: Ըստ կայքէջի, դրանք խիստ շահագրգռում են Ադրբեջանին, թե որ կուսակցությունը իշխանության կգա՝ պայմանավորված թուրք-ադրբեջանական հարաբերություններով, ղարաբաղյան հիմնահարցով եւ Թուրքիայի հայկական սահմանի բացման խնդիրներով: Թուրք փորձագետները, ինչպես կայքէջն է նշում, այս խնդիրների մեջ առանձնակի նշանակություն են տալիս սահմանի բացման հարցին եւ կարծիք են հայտնում, որ խորհրդարանական առաջիկա ընտրություններում վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության հաղթանակի դեպքում վերստին օրակարգ կմտնի Հայաստանի հետ սահմանի բացման հարցը:

Կհաջողվի՞ Էրդողանի կուսակցությանը երկրում պահպանել միանձնյա իշխանությունը: Թուրք փորձագետները կուսակցության ժողովրդականության անկման եւ միջազգային հարաբերություններում առաջացած դժվարությունների պատճառաբանությամբ դա իրատեսական չեն համարում: Նրանցից Հասան Ալի Քարասարը ասում է. «Սահմանի բացման հարցում առաջին քայլը Թուրքիան կատարեց, պարզապես մյուս կողմը չարձագանքեց դրան: Լավ էլ եղավ: Այլապես կարող էին լուրջ խնդիրներ ծագել:

*Տես էջ 3*

Մարդու իրավունքների պաշտպանը գնաց, կեցցե նոր պաշտպանը, ասում ենք մերոնք ու ... շրջանառում անուններ՝ իրենց ցանկությունների համեմատ: Շրջանառվող անունների պակաս չկա. մեկը լավ տղա է, մեկը՝ լավ աղջիկ, մեկը գրանտներով մարդու իրավունքները պաշտպանող հայտնի իրավապաշտպան է (Հայաստանում ո՞վ է զրկվել առանց գրանտի մարդու իրավունք պաշտպանի), մեկը համ լրագրող է, համ իրավապաշտպան: Անուններ տալիս նշվում են հավաստի աղբյուրներ, այդ թվում՝ նախագահական շրջանակի, թե այսպես ու այնպես, արդեն որոշում կա՝ ո՞ւմ նշանակել: Մինչդեռ ոչ ոք չի խոսում այն մասին, թե երկու պաշտպան ունենալուց հետո մենք ի՞նչ որակի պաշտպան ենք ուզում ունենալ, անկախ անձից՝ ո՞ր խնդիրները չի կարողանում իրականացնել ՄԻՊ ինստիտուտը ներկայացպիտի ազատ լինի նա, եթե օրենսդրությամբ ֆինանսավորվում է բյուջեից, եւ նրա թեկնածությունը ներկայացնում են և՛ Հայաստանի նախագահը, և՛ Ազգային ժողովը:

Ըստ օրենքի՝ պաշտպանն անկախ է եւ ենթարկվում է միայն սահմանադրությանն ու օրենքներին, միջազգային հանրաճանաչ նորմերին, որեւէ պաշտոնյայի ենթակա չէ: Բայց այդպե՞ս է արդյոք: Այն լուրը, թե նախագահականում արդեն կողմնորոշվել են՝ ո՞ւմ թեկնածության վրա կանգ առնեն (երեկ տալիս էին Կարեն Անդրեասյանի անունը), խոսում է այն մասին, որ ինչպես եւ Քոչարյանի ժամանակ, ներկա նախագահի օրոք էլ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում կհայտնվի նա, ում հարմար կհամարի նախագահը, հետո միայն կգնահատվեն նրա որակները: Այդ դեպքում ինչպե՞ս պի-

# ՄԻՊ-ը գնաց, կեցցե նոր ՄԻՊ-ը



նողը Հայաստանում, կամ միգուցե օրենսդրորեն ամեն ինչ կարգավորված չէ՞ այս ոլորտում, որ միայն անձից չպահանջենք: Երկու պաշտպան ունեցանք՝ առաջինը նոր-նոր էր ձեւավորում ոլորտը ու մեծ ցանկություն ուներ մարդկանց օգնելու, ինչն անկարեւոր չէր, սակայն բախվեց իշխանական պատին: Երկրորդն ինքը իշխանության կրող էր, Քոչարյանի կադրը ու թեեւ ինստիտուցիոնալ պատրաստվածության մասնագետ՝ հաճախ էր դառնում քաղաքական խարդավանքների ու մամուլի պատանդը (ինքը եւս դա խոստովանել է):

Երկրորդ պաշտպանին քննադատում էին թե՛ իշխանությունը, թե՛ ընդդիմությունը: Որքան էլ նա ասում էր, որ ինքը քաղաքականությամբ չի զբաղվում, երկու կողմից էլ նրան մեղադրում էին հենց քաղաքականացված լինելու համար: Մարտի 1-ի դեպքերի հետ կապված 2008-ի թվականի ՄԻՊ տարեկան զեկույցը գլխավոր դատախազը խորհրդարանում անվանեց քաղաքական փաստաթուղթ: Մարդու իրավունքների երկրորդ պաշտպան Արմեն Հարությունյանից նեղանում էր ընդդիմությունը, որ ընդդիմության ներկայացուցիչների ձերբակալություններին գնահատական չի տալիս, քանի որ քաղաքական իշխանության մաս է, իշխանությունն էլ դժգոհ էր մնում, որ նա չէր կարողանում խուսափել ընդդիմության ստեղծած ծուղակներից եւ հաճախ էր տարուբերվում իր տեսակետներում:

Այսպես թե այնպես՝ Արմեն Հարությունյանը որպես ՄԻՊ անցյալ է դառնում, նա օմբուդսմեն չի համարվի փետրվարի 11-ից հետո, երբ կրկնի իր հրաժարականը: Պաշտոնավարման 5 տարին գնահատելով՝ նա ինքն էլ խոստովանեց երկկողմ ճնշումների մասին: Քոչարյանը հրապարակավ նրան իր «ամենաանհաջող կադրն» էր անվանել, անգամ առաջին պաշտպան Լարիսա Ալավերդյանն էր մեղադրել, որ Ա. Հարությունյանը խուսափել է քաղբանտարկյալ տերմինից (Համարբերգի դասախոսությունից ոչ ոք եզրակացություն չի արել):

Իսկապես, ինչպե՞ս անել, որ ՄԻՊ-ը քաղաքական խաղալիք չդառնա ոչ իշխանության, ոչ ընդդիմության ձեռքին, մյուս կողմից էլ՝ արեւմտյան արժեքներին խորքից տիրապետելով՝ ինքը չդառնա արեւմտյան ինստիտուտների ճնշումների գերին:

Ինձ համար, որպես Հայաստանի հանրապետության քաղաքացու, վիրավորական է, որ ՄԻՊ թեկնածուների շարքում այսօր ավելի շատ շրջանառվում են արեւմտյան գրանտներով սնվող իրավապաշտպանների անուններ, մինչդեռ իսկապես դրսի հովերից զերծ ՄԻՊ ունենալու համար այդ պաշտոնում մենք պետք է ունենանք այնպիսի մեկին, որը նախ պետք է բազում ու բազում հարյուրավոր դոլարների գրանտներ կուլ տված չլինի մինչեւ պաշտպան դառնալը, իրավաբան լինելու հետ մեկտեղ՝ հասարակության համար ընդունելի ու վստահելի կերպար լինի, ցանկություն ունենա հասարակ մարդկանց իրավունքները պաշտպանել, իշխանության ազդեցությունից եւս հնարավորինս ազատ լինի: Թեեւ՝ ինչպե՞ս այդ պաշտպանը անկախ լինի նախագահականի ազդեցությունից, պաշտպանի այն մարդկանց իրավունքները, ովքեր իշխանության բարձր օղակների գործողություններից կտուժեն կամ կլինեն իշխանության հակառակորդների ճամբարում: Կամ՝ ինչպե՞ս պիտի արեւմտյան կառույցներից 1 մլն դոլար ստացած ՄԻՊ գրասենյակը չլինի արեւմտյան ճնշումների պատանդը: Հիմա, երբ արդեն երկու պաշտպան ենք ունեցել, առաջինը ձեւավորել է կառույցը, երկրորդը, իրավապաշտպաններից մեկի պատկերավոր արտահայտությամբ, միս ու արյուն է տվել այդ կառույցին, ոչ թե պիտի խոսք գնա այս կամ այն ցանկալի անձին տեղավորելու մասին՝ նոր ազատված հաստիքում, այլ մտածել, թե ինչպե՞ս այս կառույցին համեմատաբար ավելի մեծ անկախությամբ օժտել, ինչպե՞ս դարձնել այն ամենամեծ վստահություն վայելող օղակը: Իսկ եթե մեր երկրում անձերից վերանալ չեն կարող, ուրեմն ՄԻՊ-ն ավելի շատ կշարունակի մնալ ցուցանակ՝ եվրոպացիներին ուղղված, քան թե գործուն, Հայաստանում մարդու իրավունքների իրական պաշտպանության հարցը լուծող ինստիտուտ: ՄԻՊ-ին ներկայացվող օրենսդրական պահանջների հանգույն՝ այս օրերին պիտի որոնեինք հասարակության մեջ հեղինակություն վայելող մարդուն, ոչ թե սրա-նրա լոբբինգն անեինք մամուլում: Բայց մերոնք չեն փոխվում: Իսկ հեղինակավոր, հասարակության տարբեր շերտերի կողմից ընդունելի մարդ, խոստովանենք, այսօր Հայաստանում դժվար է գտնել, քանի որ իշխանությունն ու ընդդիմությունն իրար այնպես են ոչնչացրել ու հեղինազրկել, որ երրորդ պաշտպանին գտնելու համար պետք է խոշորացույցովման գալ:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Հ. Գ.-Փետրվարի 11-ից, երբ Արմեն Հարությունյանի լիազորությունները համարվեն դադարեցված, մեկ ամսվա ընթացքում պետք է նոր պաշտպան ունենանք: Պաշտպանին նշանակում է Ազգային ժողովը՝ ձայների 3/5-ից ավելիով, Հայաստանի նախագահի եւ ԱԺ պատգամավորների առնվազն 1/5-ի կողմից առաջարկված թեկնածուներից:**

# Աբովյան քաղաքում հովհարային անջատումները ցայսօր շարունակվում են

**Աբովյան քաղաքի հին թաղամասերը, հատկապես երկրորդ միկրոշրջանը, գրեթե ամեն օր հոսանքազրկվում են: Անջատումները տեւում են 2-3 ժամից մինչեւ 12-13 ժամ: Խնդիրն ավելի է սրվում հատկապես տոն օրերին, երբ ցանցի լարվածությունն ավելի է մեծանում: Արդեն երկու տարի այս թաղամասերի բնակիչները Ամանորը տոնում են խավարի մեջ: Ամռան շոգ ամիսներին պահեստի կոռուպտներ են կրում թաղամասերի խանութները, քանի որ անջատվում են սառնարաններն ու փչանում է կաթնամթերքը, տներում հաճախակի հոսանքազրկումներից շարքից դուրս են գալիս էլեկտրական սարքավորումներ՝ սառնարաններ, լվացքի մեքենաներ, համակարգիչներ ու ջեռուցման կաթսաներ: Ձմռան ամիսներին բնակիչների գազի ծախսն ավելանում է, որովհետեւ համակարգերը սառում են, եւ ամեն անգամ հոսանքը միացնելուց զրոյից տաքացնում բնակարանները: Ամեն օր մարդիկ մնում են վերելակների մեջ, իսկ հոսանք եղած ժամանակ էլ վախենում են մտնել վերելակ, քանի որ վստահ չեն, որ հերթական հոսանքազրկման պատճառով բանտարկված չեն մնա: Արդեն 20 տարի բացատրությունը մեկն է՝ բաշխիչ կայանները թույլ են եւ չեն կարողանում անխափան ապահովել պահանջվող հզորությունը: Արդյոք սա 20 տարվա խնդրին տրվող ընդունելի՞ բացատրություն է: Կամ ընդհանրապես, արդյո՞ք հսկա թաղամասերի բնակիչները ըմբռնումով ու անտրտունջ համբերությամբ պիտի անընդհատ լսեն բացատրություններ: Էլեկտրացանցերի աշխատակիցներից ո՞վ է ընդունում սպառված էլեկտրաէներգիայի դիմաց բնակչի չվճարելու բացատրությունները: Այս «անլուծելի» դարձած խնդրի պատճառով այս թաղամասերում անգամ բնակարանների գներն են ընկել:**

**Այս նամակով կոչ ենք անում քաղաքի ղեկավարներին եւ մեր ընտրած պատգամավորներին՝ իբրեւ բնակիչների ներկայացուցիչների եւ նրանց շահերի պաշտպանների, համապատասխան հայցով դիմել դատարան եւ պարտադրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությանը համապատասխան ներդրումներ կատարել համակարգի հզորացման ու բարձացման համար, ապահովել բնակիչների որակյալ սպասարկումը: Հակառակ դեպքում դժգոհության ալիքը շատ ավելի լուրջ հետեւանքների կարող է հանգեցնել:**

**Մենք պահանջում ենք, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը կատարի բնակիչների հետ կնքած պայմանագրերում նշված իր պարտավորությունները:**

**ՎԱՀԵ ԽԵՐԱՆՅԱՆ**

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

# Փետրվարի թոշակների վճարման իրավիճակը նախարարը նորմալ է համարել

**Կառավարության երեկվա նիստի ժամանակ վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանին պարզաբանումներ տալ փետրվար ամսվա թոշակների վճարման իրավիճակի վերաբերյալ: Նախարարը նախ հայտնեց, որ փետրվարի թոշակների վճարումն, ի տարբերություն նախորդ ամսվա, սկսվել է փետրվարի 2-ից, եւ առաջին օրը վճարվել է շուրջ 1 մլրդ դրամ: Դա կենսաթոշակ ստացողների մոտ 25 տոկոսն է կազմում Երեւանում: «Երեկվա դրությամբ, պետք է ասեմ, ամեն ինչ նորմալ է եղել, թոշակները նորմալ բաժանվել են», հավաստիացրեց Արթուր Գրիգորյանը: Վարչապետ Տիգրան Սարգսյանն ավելացրեց, որ մարտ ամսին պետք է բացառվեն հերթերը: «Եթե մեկ տասնյակ վճարահաշվարկային բանկեր եւ ընկերություններ արդեն սպասարկում են թոշակառուներին, նշանակում է, որ հերթեր այլեւս չպետք է լինեն», ասաց վարչապետը: Ա. Մ.**

# Եվս երկու ընկերություն կօգտվեն հարկերի վճարման հետաձգումից

**«Ստայկա» ընկերության կողմից 2011-ի փետրվարի 1-ից մինչեւ 2013-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ներմուծվող 300 մլն դրամը գերազանցող արժեքով (11 մլն ԱՄՆ դոլարի չափով ժամանակակից սարքավորումներ եւ տրանսպորտային միջոցներ) ներմուծվող ապրանքներից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարման ժամկետը կառավարության երեկվա որոշմամբ հետաձգվեց մինչեւ 2014-ի փետրվարի 1-ը: Հայաստանից թարմ մրգեր արտահանող այս ընկերությունը նախատեսում է Հայաստանում կառուցել ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած մոտ 24 հեկտար ջերմոցային համալիր, մրգի-բանջարեղենի վերամշակման արտադրամաս, որոնց շնորհիվ դրանց արտահանման ծավալը կհասցվի 70 հազար տոննայի, ստեղծելով հավելյալ 500 աշխատատեղ:**

**«ՎԿՍ Արմենիա» ընկերության համար էլ կառավարությունը «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետը երկարաձգեց մինչեւ 2012-ի ապրիլի 30-ը: Կարի արտադրության այս ընկերությունում ներկայումս աշխատում է 335 մարդ, հիմնականում՝ կանայք: Նախատեսվում է Շիրակի մարզի Ամասիա համայնքում հիմնել նոր արտադրություն: Այդ նպատակով էլ երկիր են ներմուծվելու անհրաժեշտ սարքավորումներ:**

**Ա. Մ.**

# Տարաձայնություններ հանրահավաքների օրենքի մասին

**Հավաքների եւ հանրային միջոցառումների անցկացմանն առնչվող իրավահարաբերություններին վերաբերող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ երեկ կառավարությունում վիճաբանություն ծագեց փաստաթղթերը ներկայացնող արդարադատության նախարար Հրայր Թովմասյանի եւ ազգային անվտանգության ծառայության ղեկավար Գորիկ Հակոբյանի միջեւ: Վերջինս իր դժգոհությունը հայտնեց, ասելով, թե այդ եվրոպացինե՞րը պետք է ասեն, թե հանրահավաքների ժամանակ ինչպես պետք է պահեն իրենց ոստիկանությունն ու ազգային անվտանգության ծառայությունը: Խոսակցությանը միջամտեց վարչապետ Տիգրան Սարգսյանը՝ առաջարկելով երկու գերատեսչությունների ղեկավարներին եւս մեկ անգամ համատեղ քննարկել օրենսդրական փոփոխությունները, որից հետո դրանք պետք է ներկայացվեն Ազգային ժողով:**

**Ա. Մ.**

# Բոյկոտը դիվանագիտական ամենալավ զենքը չէ

Քաղաքագետ **Ալեքսանդր Իսկանդարյանի** կարծիքով՝ ինչ այսօր կատարվում է Եգիպտոսում, գունավոր հեղափոխություն չէ: Մասսայական այս բողոքի հետեւանքով Եգիպտոսը կփոխվի, ընդհանրապես արաբական աշխարհը կփոխվի: Եգիպտոսում ստեղծված իրավիճակը քաղաքագետը պայմանավորում է ներքին պատճառներով, սակայն այս դեպքում ավելի կարեւոր են ոչ թե պատճառները, այլ հետեւանքները: Եթե Հոսնի Մուբարաքը շարունակի նախագահել, նա արդեն կլինի բոլորովին այլ Մուբարաք: Իսկ ի՞նչ ազդեցություն կունենան Եգիպտոսի զարգացումները Հայաստանում, սրա վերաբերյալ «Տեսակետ» ակումբում երեկ Ալեքսանդր Իսկանդարյանը նշեց. «Հայերը սիրում են ամեն ինչին նայել Երեւանից, բայց եթե իրավիճակին նայենք իսլամական աշխարհից, այդտեղ տրամաբանություն կտեսնենք: Հայաստանում կան բողոքի պատճառներ, բայց դրանք այլ են»:

Ասուլիսի ընթացքում Ալեքսանդր Իսկանդարյանն անդրադարձավ նաեւ ԵԽԽՎ Ղարաբաղի հարցով ենթահանձնաժողովին, որը վերսկսել է իր գործունեությունը երկարատեւ ընդմիջումից հետո: Քաղաքագետի կարծիքով՝ ԵԽԽՎ-ում Ղարաբաղի հարցով ենթահանձնաժողովը հավանաբար չի գործի: Քաղաքագետի կարծիքով՝ ենթահանձնաժողովի աշխատանքին չմասնակցելը թեեւ լավ հնարք է, սակայն բոյկոտը դիվանագիտական լավագույն զենքը չէ, ուստի դիվանագետները պետք է աշխատեն մինչեւ վերջ: **Ի. Պ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Թուրքագետ **Հակոբ Չաքրյանը** երեկ «Տեսակետ» ակումբի հյուրն էր: Անդրադառնալով արաբական երկրներում, մասնավորապես Եգիպտոսում տեղի ունեցող իրադարձություններին եւ այդտեղ Թուրքիայի ազդեցությանը՝ Հակոբ Չաքրյանը նշեց, որ Թուրքիան հանդես է գալիս որպես տարածաշրջանային գերտերության հավակնություններ ունեցող երկիր ու որպեսզի հիմնավորի դա, փորձում է հանդես բերել միջամտություն: «Այս դեպքում, սակայն, Թուրքիայի միջնորդությունը չի կարող այնքան էլ էական լինել, քանի որ Եգիպտոսը տարածաշրջանի առանցքային երկրներից է ու նաեւ առաջնորդող երկիր արաբական աշխարհում», ասաց բանախոսը՝ միաժամանակ կարեւորելով Եվրոմիության եւ Միացյալ Նահանգների գործոնը. «Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան նույնպես փորձում են նպաստել, որ Եգիպտոսում կայունություն հաստատվի»: Իսկ եվրոպական երկրների եւ Թուրքիայի ուժերը շատ անհամաչափ են:

Հարցին, թե արաբական աշխարհի զարգացումներն ինչքանո՞վ կազդեն Հայաստանի վրա, թուրքագետը պատասխանեց, որ տարածաշրջանում, այսինքն՝ Մերձավոր ու Միջին Արեւելքում, Հայաստանը չունի մեծ դերակատարություն ու ազդեցիկ դիրք, բայց երբ սրվում է իրավիճակը, միջազգային ասպարեզում հետին պլան են մղվում մեր առջեւ ծառացած խնդիրները: Թե ի՞նչ կլինի Եգիպտոսում կայունության հաստատումից հետո, այս հարցի վերաբերյալ բանախոսը կարծիք հայտնեց. «Եթե նույնիսկ վաղը Եգիպտոսում դադարեն արյունահեղության վերածված բախումները, միեւնույնն է, դեռ երկար ժամանակ երկիրը կմնա անորոշ վիճակում»: Միշտ չէ, որ նման ցույցերից հետո հաստատվում են ժողովրդավարական կարգեր ու կայունություն տվյալ երկրում: Բանախոսի կարծիքով՝ չի բացառվում, որ Հոսնի Մուբարաքից հետո ժողովրդական զանգվածների ճնշման ներքո հաստատվի իսլամական արմատական համակարգ:

Թուրքագետը նաեւ անդրադարձավ Կարսում գտնվող մարդկության հուշարձանն ապամոնտաժելու հարցին: Հուշարձանը սկզբում կոչվել է «Հայաստանի հետ բարեկամության ու հաշտության հուշարձան, այնուհետեւ անվանափոխվել է: Որոշումն արդեն կայացվել է, եւ Կարսի մարդկության հուշարձանը պետք է ապամոնտաժվի: Թուրքագետի կարծիքով՝ այս հուշարձանը բավականին տգեղ է ու սենտիմենտալ: Թուրքիայի վարչապետը հուշարձանը նույնպես անվանել է տգեղ ու անճոռնի, բայց, Հ. Չաքրյանի կարծիքով, ապամոնտաժելու որոշումը կայացվել է նաեւ ելնելով այն հանգամանքից, որ հուշարձանն ավելի բարձր է, քան շրջակա մզկիթների մինարեթները: Իսկ արդյոք մարդկության հուշարձանի գոյությունը կնպաստի՞ հայ եւ թուրք ժողովուրդների մերձեցմանը, սրա վերաբերյալ Հ. Չաքրյանը նշեց. «Չեմ կարծում, որ նման կոթողները կմերձեցնեն ժողովուրդներին: Մերձեցնելը կլիներ այն դեպքում, եթե Թուրքիան ճանաչեր Հայոց ցեղասպանությունը, դա կնպաստեր, որ երկու պետությունների միջեւ հաստատվեն առողջ հարաբերություններ, նաեւ կնպաստեր, որ գոնե մասամբ վերականգնվի հայ ժողովրդի վստահությունը թուրք ժողովրդի նկատմամբ»: Թուրքական ժողովրդական զանգվածները սիրահոժար մասնակցել են Հայոց ցեղասպանությանն ու կոտորել, կացիններով գլխատել, կողոպտել են իրենց հարեւաններին: Խոսելով թուրքերի վայրագություններից՝ բանախոսը շեշտեց. «Առհասարակ, քոչվոր անցյալ ունեցող ժողովուրդները, այդ թվում ե՛ւ թուրքերը, ե՛ւ ադրբեջանցիները, մեծ հակում ունեն կողոպուտի նկատմամբ, դա բխում է նրանց քոչվորական անցյալից ու կենսաձեւից, որովհետեւ ինչ չեն ունեցել, կողոպուտի միջոցով վերցրել են նստակյացներից: Ոչխար արածեցնողը ho՞ չէր կարող տափաստանում ցորեն ցանել, հետո էլ ալրաղացում ալյուր սարքեր ու հաց թխեր»: Շարունակելով խոսել քոչվոր ժողովուրդների՝ կողոպուտի հանդեպ ունեցած հակումից՝ Հակոբ Չաքրյանը նաեւ նշեց, որ ժամանակին ամենաթանկարժեք նվերը, որը ճանապարհորդները տանում էին թուրքմեններին, հացն է եղել:

# «Ժողովուրդների մերձեցմանը կնպաստի ոչ թե հուշարձանի գոյությունը, այլ Հայոց ցեղասպանության ճանաչումը»



ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# «Ընտրություններից հետո Թուրքիայում օրակարգ կմտնի Հայաստանի հետ սահմանի բացման հարցը»

*1-ին էջից*

Այս առումով ադրբեջանական եւ թուրքական հասարակությունները զգույշ պետք է լինեն եւ փորձեն հակազդել: Ժամանակի ընթացքում թյուրքական աշխարհը միասնական մոտեցում էր դրսեւորելու Ղարաբաղի հարցում: Այդ մասին են հուշում Թուրքիայում եւ թուրքական աշխարհում տեղի ունեցող զարգացումները: Թյուրքալեզու պետությունների հետ բոլոր համաժողովներում պետք է համատեղ հայտարարություն ընդունել Ղարաբաղի մասին: Հարցի շուրջը պետք է միավորվեն քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ու մամուլը: Թուրքիայում որոշ մարդիկ — նման կարծում են, որ հայկական սահմանի բացումը կնպաստի Հայաստանի հետ առկա բոլոր խնդիրների կարգավորմանը, հատկապես՝ ղարաբաղյան հակամարտության: Հարկ է սակայն նշել, որ Թուրքիան սահմանը չի փակել սոսկ Ղարաբաղի պատճառով: Դա պայմանավորված է նաեւ Թուրքիային Հայաստանի ներկայացրած հողային պահանջով եւ Ցեղասպանության միջազգային ճանաչման քաղաքականությամբ: Թուրքական հասարակությունը, այդ թվում՝ շարքային քաղաքացին, ցանկանում է, որ Հայաստանը Ղարաբաղի հակամարտությունում մեկուսացվի: Իշխանությունները ժողովրդի ճնշման տակ հետքայլ կատարեցին արձանագրությունների առումով: Ես այդ քայլը համարում եմ թուրք հասարակության հաղթանակը»:

Քարասարին լրացրել է Արիֆ Քեսքինը, մեղադրելով Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանություններին, թե առ այսօր չի ըմբռնել Ադրբեջանի կարեւորությունը: Այնուհետեւ նա շարունակել է. «Ադրբեջանի կորուստը լուրջ սխալ է լինելու Թուրքիայի համար: Թուրքիան վերջին շրջանում հետզհետե սկսեց հասկանալ այս իրողությունը, բայց ուշացումով: Այդ իսկ պատճառով էլ, «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը գալով իշխանության՝ լուրջ վնաս հասցրեց թուրք-ադրբեջանական հարաբերություններին: Իշխող կուսակցությունը ադրբեջանցիների վստահությունը վերականգնելու համար պետք է զերծ մնա Ադրբեջանին վնասող բոլոր տեսակի ձեռնարկումներից: Եթե նա այս ամենն անտեսելու գնով սահմանները բացի, ապա տակնուվրա կանի Ադրբեջանի եւ Թուրքիայի հարաբերությունները, իսկ թուրք-ադրբեջանական հարաբերությունների վատթարացումը վնաս կբերի Թուրքիայի ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին քաղաքականությանը»:

Թեեւ թուրք փորձագետների հայկական սահմանի բացման մտահոգությունը ակնհայտ է, սակայն հիմք չունի, քանի որ Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացը վերադարձել է ելման կետ: Գործընթացի վերականգնման որեւէ առիթ չկա, ոչ էլ կլինի, երբ տարածաշրջանում հակաքարոզչական ցույցերի պատճառով խախտվում է ուժերի հավասարակշռությունը, ստեղծվում անորոշ իրավիճակ, եւ անկայունությունը դառնում է մշտական գործոն:

Այս ամենը պետք է հայտնի լիներ թուրք փորձագետներին: Այդ դեպքում ո՞րն է նրանց՝ հայկական սահմանի բացումից բխող անհանգստության պատճառը: Ըստ երեւույթին, փորձագետներին անհանգստացնում է ոչ թե սահմանի բացումը, այլ առաջիկա ընտրություններում վարչապետ Էրդողանի կուսակցության հերթական հաղթանակը: Որքան էլ նրանք խոսեն կուսակցության ժողովրդականության անկման մասին, սոցիոլոգիական ուսումնասիրությունները հակառակն են ասում եւ կուսակցությանը նախապես վարկաբեկելու համար փորձագետները նրան վերագրում են Հայաստանի հետ սահմանի բացման պատրաստակամություն: Այլ կերպ, վերջիններս փորձագետի քողի տակ ձեռնամուխ են եղել հակաքարոզչությանը: Եթե Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը սահմանի բացման մտադրություն ունենար, կնպաստեր խորհրդարանում հայ-թուրքական արձանագրությունների վավերացմանը, այլ ոչ թե վավերացման համար նախապայմաններ կառաջադրեր հայկական կողմին:



# Հայաստանում չեն սպասում ԵԽԽՎ ԼՂ հարցով ենթահանձնաժողովի ղեկավարին, բայց նա «լիահույս» է

**Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ղարաբաղյան հարցով ենթահանձնաժողովը, անկախ ամեն ինչից, փաստացի սկսելու է իր աշխատանքը արդեն ապրիլին:**

**«Ես մտադիր եմ եռանդով աշխատել՝ իմ ժամանակից առավելագույնը տրամադրելով թեմայի ուսումնասիրությանը», ադրբեջանական «Թրենդ» գործակալությանը հայտարարել է ԵԽԽՎ նշված ենթահանձնաժողովի նորանշանակ նախագահ Խորդի Խուկլա ի Կոստան: Իսպանացի պատգամավորը վստահեցրել է, թե դեռ պետք է աշխատի «կողմերի հետ, որպեսզի ավելի լավ հասկանա կողմերի դիրքորոշումները ենթահանձնաժողովի հետագա օբյեկտիվ գործունեության համար»:**

**Ուկրաինայում եւ Վրաստանում աշխատանքի փորձ ունեցող իսպանացի ԵԽԽՎ պատվիրակը, դժվար է ասել, թե ինչպես է պատկերացնում իր աշխատանքի կազմակերպումը, այն էլ կողմերի հետ, երբ, ի մասնավորի, հայկական կողմը այդ ենթահանձնաժողովի աշխատանքի վերականգնումը ներկա պայմաններում անհեթեթություն է որակում:**

**Ամեն դեպքում, ենթահանձնաժողովի նոր նախագահը պատրաստվում է փետրվարին եւ մարտին մանրամասն ուսումնասիրել իրավիճակը հակամարտության տարածաշրջանում, նաեւ «կապեր հաստատել ակադեմիական որոշ շրջանակների, քաղաքական գործիչների ու դեսպանների հետ»:**

**Ենթահանձնաժողովի նախագահի խոսքերով, ապրիլին արդեն սպասելի են պաշտոնական շփումները Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարության հետ: Իսկ մինչ այդ տարածաշրջան այցելություն դեռեւս չի ծրագրում, քանի դեռ Կոստան լավ չի ծանոթացել հակամարտության նյութերին:**

**Հայաստանյան պատվիրակությունը խորհրդարանական վեհաժողովում, ի դեմս պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանի, ԼՂ հարցով ենթահանձնաժողովին «կենդանություն» հաղորդելու ԵԽԽՎ նախագահ Մովլուդ Չավուշօղլուի նախաձեռնության առնչությամբ քանիցս հայտարարել է, որ հայկական պատվիրակության անդամները չեն մասնակցելու ենթահանձնաժողովի աշխատանքներին: Պատճառաբանությունն այն մոտեցումն է, ինչ քանիցս արտահայտել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, թե որեւէ այլ ձեւաչափում ղարաբաղյան հարցի քննարկումները կարող են վնասել բանակցային գործընթացին:**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հովհաննես Նիկողոսյան. Միջազգային փաստաթղթերը պետք է ընկալել իրենց ամբողջության մեջ

**Քաղաքագետ Հովհաննես Նիկողոսյանը մեկնաբանեց վերջերս ԵԽԽՎ բյուրոյի որոշմամբ ԼՂ հարցով ենթահանձնաժողովի վերակազմակերպման քաղաքական եւ իրավական նախադրյալները: Ներկայացնում ենք մեկնաբանությունը ամբողջությամբ:**

**ԵԽԽՎ բյուրոյի կողմից ձմեռային նստաշրջանում վերակենդանացված 1416 բանաձեւի իրագործումը պետք է լինի ամբողջական՝ արտացոլելով խնդրո առարկա բանաձեւի դրույթների լիարժեք իրականացումը: Ընդհանրապես, միջազգային փաստաթղթերը, եւ կասկած չկա, որ ԵԽԽՎ փաստաթղթերը, առավել եւս բանաձեւի տեսքով, իրենց կերպով միջազգային են, պետք է մեկնաբանվեն եւ հետեւաբար կենսագործվեն իրենց ամբողջականությամբ: Սա հստակ ամրագրված է Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայում (թեեւ 1416 բանաձեւը պայմանագիր չէ որպես այդպիսին) եւ մի շարք այլ փաստաթղթերում, որպես, այսպես ասած, «անառարկելի նորմ», կամ jus cogens, ըստ որոնց միջազգային բնույթի փաստաթղթերը պետք է մեկնաբանվեն «բարեխիղճ ու ողջամիտ կերպով» եւ իրագործվեն իրենց ամբողջության մեջ:**

**Մասնավորապես, 1416 բանաձեւի երկու կարեւորագույն դրույթներ, որոնք նրա ոգու եւ տառի բաղկացուցիչներն են, 2005-ից ի վեր չեն իրագործվել՝ հասցնելով այս փաստաթղթին անվերականգնելի վնաս: Առաջին. 4-րդ պարբերությունը խոսում է հակամարտության լուծման նպատակով «խաղաղ միջոցների կիրառման» մասին եւ պարտավորեցնում Հայաստանին եւ Ադրբեջանին հետեւել այս պայմանին: Ի դեպ, ԼՂՀ իշխանությունները պետք է իրենց խոսքն ասեին 2005-ին, եւ պետք է ասեն նաեւ այսօր: Եթե նայենք Ադրբեջանի իշխանությունների՝ ընդհանրապես, եւ պատգամավորների՝ մասնավորապես, ելույթներին 2005-2011 թթ. ընթացքում, ապա հստակորեն կտեսնենք, որ այս սկզբունքը քանիցս խախտվել է, եւ ավելին՝ այդ հայտարարությունները փոխել են այն միջազգային միջավայրը, որտեղ ընդունվել է այդ բանաձեւը 2005-ին:**

**Երկրորդ. 1416 բանաձեւի 9-րդ պարբերությունը կոչ է արել Ադրբեջանին առանց նախապայմանների կապեր հաստատել ԼՂՀ իշխանությունների հետ: Իհարկե, կոնսենսուսի արդյունքում բանաձեւը ներառում է ավելի մեղմ որակում՝ խոսելով երկու համայնքների մասին, եւ նույնիսկ այդ դեպքում Ադրբեջանի իշխանությունները որեւէ քայլ չեն ձեռնարկել այս պայմանը կատարելու համար, եւ ավելին՝ կոշտացրել են իրենց հայտարարությունները, եւ նույնիսկ վերջերս Արցախի Եվրոպական շարժման նախաձեռնության դեմ մի մեծ արշավ սկսեցին, որն ընդհանրապես կապ չուներ իշխանություններ ճանաչել-չճանաչելու հետ, այլ միանշանակորեն վերաբերում էր ԼՂ ժողովրդին: Այսինքն՝ դա մարդու միջազգայնորեն ճանաչված իրավունքների դաշտից էր, որը նույնպես կտրուկ մերժողականություն ստացավ:**

**Միայն այս երկու օրինակները բավական են, որ հայկական կողմը հարց բարձրացնի այս բանաձեւի ոչ ամբողջական իրագործման պայմաններում այդ ենթահանձնաժողովի իրավաչափության եւ քաղաքական նպատակահարմարության հարցը ԵԽ Նախարարների խորհրդի նիստում քննարկելու համար:**

# Ճշտում

Երեկ «**Ազգի**»՝ «Սփյուռքահայերից պալատ ունենալու առաջարկի հեղինակը Հայկ Սանոյանն է» հրապարակման մեջ նշել էինք, որ Հ. Սանոյանը «Վիրահայերի միության» նախագահության անդամ է: Մեզ զանգահարած Հ. Սանոյանը ճշտեց, թե այդ տեղեկությունը հին է, եւ այժմ ինքն այդ միության անդամ չէ: Մեր կողմից ավելացնենք, որ տեղեկությունը քաղել էինք Ազգային ժողովի կայքի «Պատգամավորներ» բաժնից:

Մ. Խ.

## Հարցազրույց

# Արման Կիրակոսյան. «Ազգերի ինքնորոշման իրավունքը չի կարող ստորադասվել միջազգային իրավունքի այլ նորմերին»

## *Շարմ էլ Շեյխ եւ Հուրգադա հանգստավայրերում են գտնվում ՀՀ 164 քաղաքացիներ*

***Վերջին ամսվա ընթացքում Մերձավոր Արեւելքում տեղի են ունենում լրջագույն իրադարձություններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ինչպես Հայաստանի, այնպես էլ ողջ աշխարհի համար: Նախ՝ Սուդանը, որտեղ հունվարին տեղի ունեցավ հանրաքվե, որը պետք է որոշեր երկրի ճակատագիրը. մնալո՞ւ է միասնական, թե Հարավային Սուդանը, դե յուրե անջատվելով Հյուսիսային Սուդանից, ստեղծելու է նոր, անկախ եւ ինքնիշխան պետություն: «Ազգի» հարցի առնչությամբ, թե ինչպե՞ս կարող է մեկնաբանել այս իրավիճակը, եւ արդյոք Հարավային Սուդանի փորձը կիրառելի կլինի՞ Լեռնային Ղարաբաղի պարագայում, ներկայացնում ենք Հայաստանի փոխարտգործնախարար Արման Կիրակոսյանի պատասխանը:***

- Հարավային Սուդանի հանրաքվեին կամ, ավելի ստույգ, երկրի հյուսիսի եւ հարավի միջեւ 2005թ. ձեռք բերված «Համապարփակ խաղաղության» համաձայնագրին նախորդել էին 22-ամյա ռազմական բախումները: Հունվարի 9-15-ը Սուդանի իշխանությունները նախաձեռնեցին հանրաքվեի իրականացումը, որի մասին պայմանավորվածությունը կայացել էր 2005թ. հունվարին Սուդանի կառավարության եւ Սուդանի ազգային-ազատագրական շարժում/Սուդանի ազգային-ազատագրական բանակի միջեւ ստորագրված «Համապարփակ խաղաղության» համաձայնագրի դրույթներով: Այն նախատեսում էր համաձայնագրի ստորագրումից 6 տարի հետո Հարավային Սուդանում իրականացնել հանրաքվե:

Համաձայնագրով սահմանված վեցամյա անցումային շրջանը նախատեսված էր «Սուդանի միասնականությունը հարավի համար գրավիչ դարձնելու» նպատակով: Բուն հանրաքվեն իրականացնելու համար 2009թ. դեկտեմբերին ստորագրվեց մեկ այլ փաստաթուղթ, որով կողմերը սահմանում էին չափանիշներ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցողների համար:

Հանրաքվեի պաշտոնական արդյունքները հայտարարվելու են փետրվարի 14-ին: Այս պահին Հարավային Սուդանում մշակվել է քվեաթերթիկների գրեթե 99%-ը, եւ արդյունքների ընդհանուր պատկերն արդեն իսկ պարզ է: Նախնական տվյալներով անջատվելու օգտին քվեարկել է մասնակիցների 98,8%: Այսինքն, վստահաբար կարելի է ասել, որ միջազգային հանրությունը շուտով կհամալրվի նոր սուբյեկտով, Հարավային Սուդանի անկախության հռչակումը նախատեսված է 2011թ. հուլիսին:

Ինչ վերաբերում է Հարավային Սուդանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ զուգահեռներին, ապա պետք է նշել, որ Հայաստանի իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը տարբերվում է այլ հակամարտություններից: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն արդեն իսկ կատարել է իր ընտրությունը եւ 1991թ. հայտարարել է իր անկախությունը:



Ուշագրավ է, որ Սուդանի իշխանությունները սկզբից եւեթ հայտարարեցին, որ կընդունեն հանրաքվեի ամեն մի արդյունք եւ ջանքեր կգործադրեն դրա կատարման ուղղությամբ: Հարավային Սուդանի օրինակը մեկ անգամ եւս փաստում է, որ ազգերի ինքնորոշման իրավունքը չի կարող ստորադասվել միջազգային իրավունքի այլ նորմերին, ավելին, վերջին տարիներին մենք ականատես ենք հենց ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա պետությունների ստեղծմանը: Սա ընդունում է Սուդանի իշխանությունը, ընդունում է միջազգային հանրությունը եւ պետք է ընդունի նաեւ Ադրբեջանը:

**- Ալժիրում՝ ավելի մեղմ, Թունիսում՝ ավելի զորեղ, տեղի ունեցան ժողովրդական ընդվզումներ, որոնք Թունիսի երկարամյա նախագահ Բեն Ալիի եւ նրա կառավարության համար ավարտվեցին պաշտոնաթողությամբ, եւ նախագահը ստիպված եղավ լքել երկիրը: Ընդվզումների ալիքը տեղափոխվեց Եգիպտոս, ուր արդեն մեկ շաբաթ ցուցարարները պահանջում են երեք տասնամյակ պաշտոնավարող նախագահ Մուբարաքի հրաժարականը: Եգիպտոսը եւ Թունիսը գրավիչ զբոսաշրջային ուղղություններ են նաեւ ՀՀ քաղաքացիների համար: Ինչպիսին է իրավիճակն այդ երկրներում եւ ինչ քայլեր են ձեռնարկվում մեր քաղաքացիների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:**

- Հայաստանն իր անկախությունից ի վեր ջերմ եւ փոխշահավետ քաղաքական հարաբերություններ է զարգացրել արաբական երկրների հետ: Անշուշտ, մեր մշտական ուշադրության կենտրոնում են տարածաշրջանային զարգացումները, եւ մենք գիտակցում ենք, որ տարածաշրջանում առկա են արմատական լուծման կարոտ բազմաթիվ խնդիրներ:

Եգիպտոսը տարածաշրջանի հեղինակավոր երկրներից է, որը ծանրակշիռ դեր ունի Արաբական պետությունների լիգայում, Աֆրիկյան միությունում, Ներպաղեստինյան կարգավորման հիմնական միջնորդներից է եւ Հայաստանի համար կարեւոր նշանակություն ունեցող հարցերում մշտապես ցուցաբերել է հավասարակշռված ու հեռանկարային քաղաքականություն: Կարծում ենք, որ թե՛ Եգիպտոսում եւ թե՛ Թունիսում պետք է իրականացվեն խոր բարեփոխումներ, որոնց արդյունքները պետք է նպաստեն հասարակության բարեկեցության բարձրացմանը, ներքաղաքական կայունության ու ժողովրդավարության հաստատմանը:

Ինչ վերաբերում է այդ երկրներում ՀՀ քաղաքացիների հետ կապված խնդիրներին, ապա Թունիսում ներկա պահին ՀՀ քաղաքացիներ չկան: ԱԳ նախարարությունը մշտական կապի մեջ է Եգիպտոսում ՀՀ դեսպանության հետ: Ներկա պահին, Եգիպտոսի Շարմ էլ Շեյխ եւ Հուրգադա հանգստավայրերում են գտնվում 164 ՀՀ քաղաքացիներ, եւս 65 ՀՀ քաղաքացի, որոնց թվում են նաեւ երկքաղաքացիություն ունեցող անձինք, հաշվառվել են Եգիպտոսում ՀՀ դեսպանությունում:

Այս թվերը փոփոխական են, դեսպանությունում բացվել է «թեժ գիծ», եւ մշտապես թարմացվում են տվյալները: Իրավիճակը հանգստավայրերում հանդարտ է, կառավարությունը անվտանգության լրացուցիչ միջոցառումներ է ձեռնարկել երկրի տուրիստական կենտրոններում: Այս պահին, եգիպտական իշխանությունների ձեռնարկած միջոցառումները բավարար են զբոսաշրջիկների անվտանգության ապահովման առումով եւ ՀՀ քաղաքացիների տարհանման խնդիր դեռեւս չի քննարկվում: Սակայն իրավիճակի բացասական զարգացման դեպքում կարող են ձեռնարկվել համապատասխան քայլեր: Այնուամենայնիվ, ՀՀ ԱԳ նախարարությունը հորդորում է ՀՀ քաղաքացիներին՝ առանց հույժ անհրաժեշտության չմեկնել Եգիպտոս եւ Թունիս:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Մեր օրենսդրության հիմունքները բացառում են ազգային, կրոնական եւ ռասայական խտրականություն»

## *Հարցեր ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանին*

*1-ին էջից*

Պարբերաբար հանդիպում եմ խորհրդարանական պատվիրակությունները: Դա օգտակար է երկուստեք: Չեմ խոսում պաշտոնական ուղերձների կամ նամակների մասին, որ մենք միմյանց հղում ենք: Միջազգային կառույցների մասով չէի ուզենա ծավալվել՝ նկատի ունենալով խնդրի նրբությունը հատկապես նրանց համար: Ասեմ միայն, որ վերջին երկու տարում մեր խորհրդարանի պատվիրակությամբ ես եղել եմ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների խորհրդարաններում: Ստեղծվել է բավարար հիմք, որը պետք է ամրապնդել ու զարգացնել: Մասնավորապես, Ֆրանսիայի խորհրդարանի հայ-ֆրանսիական բարեկամության խմբի հետ աշխատանքը տալիս է կոնկրետ արդյունքներ:

**- Ճանաչելո՞ւ է ԼՂՀ-ի ԱԺ-ն այլ չճանաչված կամ ոչ բոլորի կողմից ճանաչված երկրների անկախությունը (օրինակ՝ Աբխազիա, Մերձդնեստր, Կոսովո), եւ քայլեր ձեռնարկվո՞ւմ են արդյոք, օգտագործելով միջխորհրդարանական կապերը, այդ երկրների կողմից «ճանաչել տալ» ԼՂՀ-ն:**

- Կոսովոյի խորհրդարանի Անկախության հռչակագրին եւ Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախությունը Ռուսաստանի կողմից ճանաչելուն Արցախի խորհրդարանն անդրադարձել է քաղաքական ուժերի հայտարարությամբ: Ոչ մեր կողմից այդ պետական կազմավորումների ճանաչման, ոչ էլ հակառակ պարագայում, մենք չենք կարող առաջնորդվել այսրոպեական վճիռների տրամաբանությամբ: Դրանք որոշակի նախապատրաստական, փոխադարձ հետաքրքրությունների համադրման աշխատանքների արդյունք պետք է լինեն: Ինչ վերաբերում է մեզ «ճանաչել տալուն», ապա մենք ելնում ենք այն բանից, որ ամեն երկիր ինքն է որոշում ուրիշների հետ հարաբերվելու մակարդակն ու ձեւը:

**- Ընդհանուր տպավորություն կա, որ ԼՂՀ Ազգային ժողովը օրենսդրական եւ հատկապես վերահսկողական գործառնությունն ակնկալված բարձրության վրա չի գտնվում: Որքանո՞վ է հիմնավոր այս տպավորությունը եւ, իրականում, Դո՛ւք ինչպե՞ս կգնահատեք ԼՂՀ ԱԺ գործունեությունը:**

- Չեմ կարծում, թե դա ընդհանուր տպավորություն է, բայց որ այդպիսի կարծիքներ կան՝ բնական եմ համարում: Երկար ծավալվել չեմ ուզում, որովհետեւ հարկ կլինի վիճակագրական տվյալներ բերել, համեմատություններ՝ նախորդ գումարումների խորհրդարանների գործունեությունից, բայց փորձեմ բացատրել այդօրինակ տեսակետների հիմքերը, որոնք, ըստ իս, իրավիճակի ոչ այնքան անկողմնակալ գնահատական են:

Յուրաքանչյուր երկրի օրենսդիր մարմնում նախաձեռնությունների մեծ մասի հեղինակ է գործադիր իշխանությունը: Մենք բացառություն չենք: Վերահսկողական գործառնության մասով ասեմ, որ Արցախի խորհրդարանը գործում է սահմանադրությամբ եւ կանոնակարգ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում: Սահմանադրությունը մեզ վերահսկողական գործառույթ, դրա դասական ընկալմամբ, չի վերապահում: Մենք հաստատում ենք վարչապետի՝ ԼՂՀ նախագահի ներկայացրած թեկնածությունը, հավանություն ենք տալիս կառավարության գործունեության ծրագրին, օրենքով հաստատում ենք պետական բյուջեն եւ դրա կատարման մասին տարեկան հաշվետվությունը, ինչպես նաեւ՝ կառավարության մասնավորեցման ծրագիրն ու դրա կատարման տարեկան հաշվետվությունը, հաստատում բյուջեն ունեցող նպատակային տարեկան ծրագրերը: Յուրաքանչյուր նստաշրջանի ընթացքում կառավարությունն առնվազն երկու անգամ պատասխանում է պատգամավորների հարցերին: Պատգամավորները կարող են կառավարությանը դիմել նաեւ գրավոր հարցապնդումներով: Մենք այս լիազորություններն իրացնում ենք լրիվ ծավալով: Եթե դա քիչ է թվում, ապա այստեղ արդեն առկա է ընկալման խնդիր:

**- ԼՂՀ-ում, հաշվի առնելով կարգավորման արդյունքում ադրբեջանցի տեղաբնակների վերադարձի հնարավորությունը Լեռնային Ղարաբաղի անկախ Հանրապետություն, կա՞ ընդունված օրենք՝ ազգային փոքրամասնությունների, դրանց ինչ-ինչ լիազորություններ տրամադրելու մասին:**

- Միանգամից ուզում եմ ասել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում թե՛ օրենսդրության, թե՛ մյուս բոլոր իրավական ակտերի մշակումն ու կիրարկումը չեն պայմանավորվում կարգավորման գործընթացով ու դրանից ակնկալվող արդյունքներով: Այլ բան է, որ միջազգային չափանիշներին համապատասխան, մեր օրենսդրության հիմունքները բացառում են ազգային, կրոնական եւ ռասայական խտրականությունը: Ըստ այդմ, արդեն իսկ գործող՝ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների», «Լեզվի», «Կրթության», «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքներով երաշխավորված են դավանանքի ազատությունը, մայրենի լեզվով կրթություն եւ տեղեկատվություն ստանալու եւ տարածելու՝ ազգային փոքրամասնությունների իրավունքները: Մյուս բոլոր հարցերի պատասխանը տալիս է Սահմանադրությունը:

**- ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, այցելելով Ստեփանակերտ, ծանոթանո՞ւմ են արդյոք ԼՂՀ ԱԺ ընդունած օրենքներին եւ առհասարակ՝ ԼՂՀ օրենսդրությանը:**

- Համարյա թե համոզված եմ, որ նրանք ծանոթ են մեր երկրի սահմանադրությանը, բայց չեմ կարող նույնը պնդել ամբողջ օրենսդրության մասին: Համենայն դեպս, նրանք ինձ այդպիսի առաջարկով չեն դիմել: Երկու տարի առաջ համանախագահները հանդիպել են Ազգային ժողովի պատգամավորներին, լսել նրանց տեսակետներն ու շարադրել իրենց ընկալումները: Եվ այդ ժամանակ մենք պայմանավորվել էինք, որ կշարունակենք այդ ձեւաչափով հանդիպումները:

**- ՀՀ ԱԺ-ի հետ ԼՂՀ ԱԺ-ի համագործակցությունն ի՞նչ աստիճանի է գտնվում: Ձեզ գոհացնո՞ւմ է համագործակցության ներկայիս մակարդակը:**

- Եթե դատելու լինենք այն դինամիկայով, որ նկատելի է վերջին տարիներին Հայաստան-Արցախ միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի նիստերի հաճախականության եւ քննարկվող հարցերի լայն շրջանակի նույնիսկ թեթեւակի վերլուծությունից, ապա կարող եմ միանշանակ ասել, որ իրոք գոհ եմ համագործակցության ներկա մակարդակից: Քանի որ արդեն նշել եմ, որ մեզ համար միջխորհրդարանական հարաբերությունների ամենագործուն միջավայրը հենց ՀՀ Ազգային ժողովի հետ կապերն ու շփումներն են, կուզենայի միայն ավելացնել, որ ակնհայտ է նաեւ այդ համագործակցությունը խորացնելու եւ կատարելագործելու՝ Հայաստանի խորհրդարանի նախագահի եւ մեր մյուս գործընկերների ցանկությունը: Միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի շրջանակներում, ինչպես նաեւ մշտական հանձնաժողովների, կարող եմ ասել՝ կանոնակարգված շփումները թույլ են տալիս քննարկել որեւէ հարց եւ գտնել լուծումներ:

**- Ինչպե՞ս կգնահատեք Արցախում մամուլի վիճակը:**

- Բավարար, բայց ոչ գոհացնող: Հնարավորություններն ավելին են, քան օգտագործվում են: Ես դատում եմ որպես ընթերցող, տեղեկատվություն ստացող անձ: Մյուս դեպքերում պետական մարմինների միջամտությունը, բացի նրանից, որ կառավարությունն ամեն տարի լրատվամիջոցներին ֆինանսական աջակցություն է ցուցաբերում, սահմանադրությամբ եւ օրենքներով արգելված է: Իմ տպավորությամբ, կա պահանջվածության եւ առաջարկի խնդիր:

# Մուբարաքի կողմնակիցների եւ հակառակորդների բախումներ Կահիրեում

## *Փոխնախագահը «երկխոսություն» է սկսել տարբեր ուժերի հետ*



Կահիրեի «Թահրիր» հրապարակում (Ազատագրության հրապարակ) փետրվարի 2-ին նախագահ Հոսնի Մուբարաքի կողմնակիցների եւ հակառակորդների միջեւ սկսված բախումները երեկ առավոտյան շարունակվել են: Պաշտոնական աղբյուրները հաղորդում են 4 սպանվածների եւ առնվազն 1500 վիրավորների մասին: Ոչ պաշտոնական տվյալներով, Կահիրեի կենտրոնում սպանվել է առնվազն 8 մարդ: Քաթարյան «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը բերում է ականատեսների վկայություններ, որոնց համաձայն «մուբարաքցիները» գնդակոծել են բողոքի ցույցի մասնակիցներին, այդ թվում կանանց:

Հիվանդանոցներում ազատ տեղ չկա, դեղորայքը չի բավականացնում: Վիրավորներին հաճախ չեն էլ գրանցում: Վերջին մեկ շաբաթվա ընթացքում տարբեր բնակավայրերում սպանվածների թիվն անցնում է 300-ից: Վիրավորների թիվը մի քանի հազար է:

Բանակն առաջվա պես չի միջամտում՝ պահպանելով չեզոքություն: Զինվորականները եւ ոստիկանները Կահիրեում վերահսկում են «Թահրիր» հրապարակի շրջակայքը: Ցուցարարները բանակից պահանջում են կանգնեցնել «մուբարաքցիների» զինված խմբերին: Մուբարաքի հրաժարականը պահանջող մարդիկ հայտարարում են, որ իշխանությունները «մարդասպաններ են վարձել» այլախոհների հետ հաշվեհարդար տեսնելու նպատակով:

«Լիբերասիոն» թերթը մեջբերում է ցուցարարներից մեկի այն խոսքը, որ մարդիկ նախընտրում են Մուբարաքի իշխանության դեմ շարունակել պայքարը մինչեւ վերջ, թեկուզ՝ կյանքի գնով, քան հետագայում տանջամահ լինել ներկայիս վարչակարգի բանտազնդաններում:

Նման պայմաններում ցուցարարներից ոմանք ինքնապաշտպանության նպատակով ստիպված են զինվել:

Փոխնախագահ Օմար Սուլեյմանը նախօրեին ցուցարարներին կոչ էր արել դադարեցնել բողոքի ելույթները, բանակցային խումբ կազմել ու սկսել իշխանությունների եւ ընդդիմության երկխոսություն: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ երեկ Եգիպտոսի հանրային հեռուստատեսությունը հակիրճ հայտարարություն է տարածել Օմար Սուլեյմանի հետ «քաղաքական կուսակցությունների եւ ազգային ուժերի երկխոսության» առաջին փորձերի մասին: Երկխոսության մասնակիցների անունները եւ այլ մանրամասնություններ չեն հրապարակվել:

Նաեւ հաղորդվում է, որ սկսվել են անկարգություն հրահրողների զանգվածային ձերբակալություններ: Կալանավորվել են բանտերից փախած հազարավոր կալանավորներ: Բանակի եւ ոստիկանության օգնությամբ երկրի քաղաքական ղեկավարությունը փորձում է վերականգնել իրավիճակի հսկողությունը:

Ընդդիմության առաջնորդ Մոհամմեդ էլ Բարադեյը չորեքշաբթի օրը հայտարարել է, թե Եգիպտոսում իսկական քաղաքացիական պատերազմ է սկսվել:

Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն հույս է հայտնել, որ Եգիպտոսի ապագա կառավարությունը կկատարի եգիպտա-իսրայելական հաշտության պայմանագիրը: Ներկայումս Եգիպտոսում կտրուկ ուժեղացել են հակաիսրայելական տրամադրությունները: Իսլամիստները Մուբարաքին մեղադրում են, որ նա «ծախվել է Իսրայելին»: «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ակտիվիստները նախագահին անվանում են «սիոնիստների խամաճիկ»:

«Մուսուլման եղբայրների» առաջնորդներից Ռաշադ ալ Բայումին NHK հեռուստաալիքի եթերում կոչ է արել խզել ավելի քան երեսուն տարի առաջ ստորագրված եգիպտաիսրայելական հաշտության պայմանագիրը, ինչպես նաեւ դադարեցնել տնտեսական համագործակցությունն Իսրայելի հետ:

Պետրոս Քեշիշյան

# Լուժկովի հետ կապված 230 մլրդ ռուբլու ֆինանսական խախտումներ

Հաշվիչ պալատը փետրվարի 4-ին հաշվետվություն կներկայացնի Մոսկվայի քաղաքապետարանի գործունեության աուդիտորական ստուգման արդյունքների վերաբերյալ: Պալատի ղեկավար Սերգեյ Ստեպաշինի խոսքերը վկայակոչելով՝ «Կոմերսանտ» թերթը հաղորդում է, որ բացահայտվել են 230 մլրդ ռուբլու ֆինանսական խախտումներ: Դրանց մեծ մասն արձանագրվել է տրանսպորտային պետգնումների համակարգում: Հաշվիչ պալատը դժգոհ է պաշտոնյաների գրասենյակների վարձակալման, հեռախոսակապի եւ ծառայողական ավտոմեքենաների ուռճացված ծախսերից:

Մոսկվայի նախկին քաղաքապետ Յուրի Լուժկովը, որն այս շաբաթ Զալցբուրգում է (Ավստրիա), Լոնդոնի «Ֆայնենշըլ թայմս» թերթին տված հեռախոսային հարցազրույցում ասել է, որ ինքը կմնա Ռուսաստանում եւ կպայքարի իր քննադատների դեմ, որոնց նա մեղադրել է «քաղաքական ահաբեկման» մեջ:

2010-ի վերջերին ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հրամանագրով պաշտոնանկ արված Լուժկովը կարծում է, որ Մոսկվայի նախկին վարչակազմի կաշառակերության (ֆինանսական խախտումների) հետ կապված մեղադրանքների նպատակն է իրեն ստիպել թողնելու Ռուսաստանը: «Ես կմնամ Մոսկվայում եւ կմարտնչեմ իմ պատվի եւ անվան համար», հայտարարել է Լուժկովը «Ֆայնենշըլ թայմսին»:

ԱԴՐԲԵՋԱՆ

# Հրեատյացություն՝ պետական մակարդակով

**Բաքվում վերահրատարակվել է անցյալ դարասկզբի ռուս ծայրահեղ ազգայնական լրագրող Վասիլի Վելիչկոյի «Կովկաս» գիրքը: Շնորհանդեսին ներկա է եղել Իլհամ Ալիեւի աշխատակազմի բաժնի պետ Էլնուր Ասլանովը, ինչպես եւ՝ Ադրբեջանի ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Յագուբ Մամեդովը:**

**Վելիչկոյի «աշխատության» վերահրատարակման շարժառիթը պարզ է. սույն հեղինակը Թիֆլիսի «Կովկաս» ռուսատառ լրագրում ժամանակին հանդես է եկել հակահայկական հոդվածներով, որոնք էլ, ըստ էության, հետագայում օգտագործել է իր գրքում: Ադրբեջանական քարոզչության նպատակն, այսպիսով, այն է, որ ցույց տրվի եւ քարոզվի, որ «հայերի էության մասին նաեւ ռուս հեղինակն է խոսել»:**

**Դա, իհարկե, շատ էժան հնարք է: Վելիչկոն չէ, որ արտահայտում է ռուս մտավորականության վերաբերմունքը հայ ժողովրդի, նրա էության, մշակույթի եւ ձգտումների նկատմամբ:**

**Այնուամենայնիվ, հարցին արժե մոտենալ սառնասրտորեն: Վելիչկոյի հիշյալ գիրքն այդ դիտանկյունից գնահատելիս ակնհայտ է դառնում մի ճշմարտություն. այն ոչ այնքան հակահայկական է, որքան՝ հակահրեական:**

**Այսպես, անդրադառնալով հայ ժողովրդի ծագումնաբանությանը՝ Վելիչկոն ասում է. «Իմիջիայլոց, ահա թե ինչ է գրել վարշավյան պատվավոր պրոֆեսոր Դ. Ի. Ազարեւիչը. «Չունենալով ձեռքի տակ գրադարաններ, ես միայն ձեզ կհիշեցնեմ, որ հնէաբանների համագումարում, որ վերջին անգամ տեղի է ունեցել Մոսկվայում, մարդաբանական բաժինը՝ նախագահությամբ Վիխրովի, լսել է մի ֆրանսիացու, կարծեմ՝ Ֆիգյեի, զեկուցումը հայերի սեմականության մասին (ընդծումը՝ բնագրում- Վ.Ա.): Այդ համագումարի նյութերը դժվար չէ գտնել Կայսերական հանրային գրադարանում եւ այնտեղ փնտրել եւ սույն զեկուցումը»: Պատվելի գիտնականին, ով, կարծում եմ, անհամեստություն չի համարի, որ ես հղում եմ անում իր հեղինակությանը, զայրացրել է հայության չափազանց համարձակ պաշտպանների թեթեւ վերաբերմունքը հանդեպ գիտության: Նրանցից ոմանց համար կարող է արդարացում ծառայել Բրոկհաուզի եւ Եֆրոնի բառարանի ուղղակի ցուցումն առ այն, որ հայերը «հնդեվրոպական ցեղի իրանական խմբի հատված են» (ընդգծումը՝ բնագրում- Վ.Ա.), որ հատուկ է առանձնապես հրեաների կողմից տպագրվող բառարաններին»:**

**Մենք ձեռնպահ ենք մնում Վելիչկոյի մարդաբանական «գիտելիքներին» եւ կիրառած «մեթոդին» գնահատական տալու մտքից, այլ արձանագրում ենք իրողությունը. նա ընդունում է տեսակետը, որ հայերն «ունեն սեմական ծագում» եւ, ընդհակառակը, մերժում նրանց պատկանելությունը հնդեվրոպական ցեղի իրանական խմբին:**

**Վելիչկոն շարունակում է. «Հայերը մի կողմից հավատին դավաճանելու գնով բռնել են այլադավան իշխողների հանդեպ ստրկական հարաբերությունների ճանապարհը, մյուս կողմից ամրապնդել են ընդհատակյա պետության այն հատուկ տեսակը, որ համապատասխանում է նրանց սեմական բնազդներին (ընդգծումը մերն է- Վ.Ա.), այն է՝ կրոնապետությունը, որտեղ քաղաքական եւ նյութական արժեքներն ունեն առանձնահատուկ նշանակության՝ ի վնաս կրոնականի»:**

**Այս տեսական «հիմնավորումն» անելուց հետո Վելիչկոն անցնում է իր ժամանակի Կովկասի իրողությունների գնահատմանը եւ ցույց տալիս, որ «հայերն իրենց ձեռքում են կենտրոնացրել Թիֆլիսը եւ Բաքուն», նրանք են «տնօրինում Բաթումը՝ այդ կերպ վերահսկելով ապրանքաշրջանառությունը», թեեւ «նրանք կազմում են Թիֆլիսի բնակչության 40 տոկոսը, բայց քաղաքային դուման նրանցն է, ռուսները եւ վրացիներն այնտեղ մուտք չունեն»:**

**Եվ՝ հիմնական ընդհանրացումը. «Կովկասում սոցիալ-քաղաքական հարցը համընկնում է ցեղայինին. բուրժուան բաղկացած է գրեթե բացառապես հայերից... որը խոշոր սոցիալական վտանգ է տեղական բնակչության համար, իսկ պետական գործի համար՝ քաղաքական վտանգ»:**

**«Ուսումնասիրության մեխը» դա է: Իր տեսակետը «հիմնավորելու» համար, այսպիսով, Վելիչկոն այլ բան չի գտել, քան ասել, որ «հայերը հրեաների նման անիշխանական են, քանի որ ունեն սեմական ծագում»:**

**Պետք է թերեւս ընդգծել, որ Վելիչկոյի դարաշրջանի Ռուսաստանն ընդգծված հակահրեական պետություն էր: Բավական է նկատել տալ, որ 1900-ականներին Ռուսաստանի մանավանդ հարավային քաղաքներում տեղի են ունեցել հրեական ջարդեր, իսկ Կովկասում՝ հայկական կոտորածներ: Բնականաբար, դրանում շահագրգռված էին վերնախավի այն ուժերը, որոնց գաղափարախոսը Թիֆլիսում Վասիլի Վելիչկոն էր:**

**Բայց, տեր աստված, չէ՞ որ այդ ամենը եղել է մեկ դար առաջ: Ի՞նչ կարիք կար հրատարակելու «վելիկոռուսական շովինիստի» մտավարժանքները, կազմակերպելու շքեղ շնորհանդես: Մի՞թե հանուն նրա, որ Վելիչկոն Կովկասի թաթարներին համարում է «օրինապաշտ հպատակներ»: Արժե՞ դրանով հպարտանալ:**

**Եվ հետո՝ Բաքվում պետական հովանավորությամբ վերահրատարակելով մինչեւ վերջ հակահրեականությամբ թաթախված մի գիրք, Ադրբեջանի իշխանություններն իրենց հաշիվ տալի՞ս են, որ դրանով իսկ պաշտոնապես օրինականացնում են այդ նողկալի տեսությունը: Այլ դեպքերում, այնինչ, ջանք եւ եռանդ չի խնայվում քարոզելու Ադրբեջան-Իսրայել «բարձր մակարդակի հարաբերությունները» ու «Ադրբեջանի հրեական համայնքի ծաղկումը»: Հետաքրքիր է, ի՞նչ է մտածում Եվդա Աբրամովը, երբ իր ժողովրդի դեմ ատելություն տածող գիրք է վերահրատարակվում մի երկրում, որի խորհրդարանում ինքը կոչված է ներկայացնելու հրեական համայնքը:**

**Ի վերջո. եթե Ադոլֆ Հիտլերը «Մայն կամպֆ»-ում մի քանի վայրահաչություն էլ հայերիս հասցեին թույլ տված լիներ, Իլհամ Ալիեւը կարգադրելու էր, որ այն ադրբեջաներեն թարգմանվի եւ տպագրվի՞:**

**Անշուշտ:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Պուտինի համար բացահայտվել է, Մեդվեդեւի համար՝ ոչ

**Մի քանի օր առաջ ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը հայտարարեց, որ «Դոմոդեդովո» օդանավակայանում հունվարի 24-ին տեղի ունեցած ահաբեկչությունը ամբողջովին բացահայտվել է: Հիշեցնենք՝ օդանավակայանում պայթյունի հետեւանքով զոհվել են, ըստ վերջին տվյալների, 36, վիրավորվել 124 հոգի, այդ թվում՝ ՌԴ հայազգի քաղաքացիներ: Սակայն նախագահ Մեդվեդեւը երեկ՝ ՌԴ դաշնային անվտանգության ծառայության ղեկավար Ալեքսանդր Բորտնիկովի հետ հանդիպումից հետո, հայտարարել է. «Ամբողջովին անթույլատրելի եմ համարում, երբ նախքան հետաքննության ավարտը որեւէ մեկը խոսում է, թե հանցագործությունը, մանավանդ՝ նման ծանր հանցագործությունն արդեն բացահայտված է: Ես հայտարարում եմ՝ այս հանցագործությունը դեռ բացահայտված չէ, սակայն այդ գործում կա առաջխաղացում»: Ալեքսանդր Բորտնիկովն իր հերթին ներկայացրել է հենց այդ «առաջխաղացումը». «Մենք արդեն գիտենք, թե ով է այն մահապարտը, որն իրականացրել է պայթյունը: Սակայն հիմա կասեմ միայն նրա տարիքը՝ նա 20-ամյա հյուսիսկովկասցի է, եւ անցյալ տարվա օգոստոսից անդամագրված է ահաբեկչական կազմակերպություններից մեկին»: Բորտնիկովը հավելել է նաեւ, որ իրենք ձերբակալել են «մի քանի հոգու եւս, որոնք ինֆորմացված էին, որ օդանավակայանում նախապատրաստվում է իրականացնել պայթյուն»: Հիշեցնենք՝ որ նախքան ահաբեկչությունը որոշ մարդիկ տեղեկացված են եղել դրա իրականացման մասին, խոսում էին հենց պայթյունի օրը, սակայն՝ ոչ պաշտոնական աղբյուրները:**

Հ. Ա.

# Պակիստանցի աշակերտը ձերբակալվել է աստվածանարգության մեղադրանքով

Կարաչի քաղաքում 17-ամյա դպրոցական Մուհամմադ Սամիուլլան ձերբակալվել է քննական աշխատանքը հանձնելուց հետո: Քննական հանձնաժողովի ղեկավարը շարադրության բովանդակության առնչությամբ գանգատվել է ոստիկանությանը, եւ դեռահասը ձերբակալվել է: Տեղական դատարանը որոշել է նրան կալանքի տակ պահել գործի քննության ընթացքում: Այդ մասին հաղորդում է BBC-ն:

Human Rights Watch միջազգային իրավապաշտպանական կազմակերպության կարծիքով, աշակերտի ձերբակալությունը մարդու իրավունքների խախտման աղաղակող դեպք է:

Պակիստանը աչքի է ընկնում աստվածանարգությանը վերաբերող օրենքի շահարկումներով: Անցյալ տարվա նոյեմբերին քրիստոնեուհի Ասյա Բիբին Մուհամմեդ մարգարեին վիրավորելու մեղադրանքով դատապարտվեց մահապատժի: Մեղադրյալն իրեն մեղավոր չի ճանաչում:

Հունվարին սպանվեց Փենջաբի նահանգապետ Սալման Թասիրը, որը Պակիստանի ազատական քաղաքական գործիչներից էր: Թասիրին գնդակահարեց նրա թիկնապահներից մեկը, դժգոհելով, որ նա հանդես է գալիս աստվածանարգությանը վերաբերող օրենքի մեղմացման օգտին:

Այդ օրենքի հակառակորդները կարծում են, որ այն օգտագործվում է կրոնական փոքրամասնություններին հետապնդելու, ինչպես նաեւ անձնական հաշիվներ մաքրելու նպատակով:

ԱԶԳ

# Մշակույթ

## Շուտով՝ դասական երաժշտության անկրկնելի երեկո Երեւանում

«Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամը ՀՀ-ում Իտալիայի դեսպանության հետ համատեղ նախաձեռնել են միջոցառում, որն, անկասկած, սպասված նվեր է հայ երաժշտասեր հասարակության համար: Միայն մեկ օր, փետրվարի 11-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կկայանա իտալական հանրահայ «Վենետիկի մենակատարներ» նվագախմբի բացառիկ համերգը՝ աշխարհահռչակ դիրիժոր Կլաուդիո Շիմոնեի գլխավորությամբ: Համերգի ընթացքում կհնչեն դասական երաժշտության գոհարներ հանդիսացող կատարումներ Վիվալդիի, Ալբինոնիի, Տարտինիի, Ռոսինիի եւ այլոց ստեղծագործություններից:




Այս նվագախումբը, իր շուրջ կեսդարյա կենսագրության ընթացքում հասցրել է ողջ աշխարհով մեկ մեծ համբավ ձեռք բերել, ելույթներ ունենալով հանրահայտ բեմերում եւ միջազգային հեղինակավոր փառատոներում: Իր անփոխարինելի Մաեստրոյի գլխավորությամբ նվագախումբը մասնակցել է աշխարհի շուրջ 80 երկրներում կայացած 5500-ից ավելի համերգների եւ երաժշտական փառատոների: Նվագախումբը հարուստ մշակութային գործունեություն է ծավալում՝ համագործակցելով մեր ժամանակների լավագույն երգիչների եւ մենակատարների հետ:

Հայ երաժշտասեր հասարակության համար նախատեսված այս բացառիկ համերգի կազմակերպումը հնարավոր է դարձել ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի մեծ աջակցության շնորհիվ: Նախաձեռնության հեղինակները լիահույս են, որ ապագայում եւս «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի եւ ՀՀ-ում Իտալիայի դեսպանության համագործակցությունը շարունակական կլինի:

## Ծաղկաքաղ պարսկական պոեզիայի

Հայաստանի Ազգային գրադարանի նիստերի սրահում այսօր, փետրվարի 4-ին, ժամը 13:00-ին տեղի կունենա «**Ծաղկաքաղ պարսկական ժամանակակից պոեզիայից**» (կազմող եւ թարգմանիչ՝ **Աշոտ Մինասյան**) գրքի շնորհանդեսը:

Այստեղ ներկայացված են պարսիկ շուրջ 55 բանաստեղծների՝ Միրզա Սադեղ Հաֆիմի, Նասիմ Շեմալի, Իրաջ Միրզայի, Ալի Աքբար Դեհխոդայի, Արեֆի, Սիմին Բեհբահանի եւ այլ գրողների գործերից, բանաստեղծություններից բացի, գրքում զետեղված է նրանց համառոտ կենսագրությունը:

Առանձին բաժնով ներկայացված են քաղաքացիական պայքարի տարիներին (1905-1925թթ.) ստեղծագործող կին բանաստեղծների ստեղծագործություններից, այդ հեղինակներից են՝ Շահին Ֆարահանին, Ֆախրի Խալաթբարին, Ֆանին:

«Երիտասարդ նորարարներ» խորագրի ներքո ներկայացված են Աթեշի, Մինա Ասադի, Սիավոշ Քասրայի գործերը: Ա.Մինասյանը գրում է, որ այս շարքի բանաստեղծներին իրենց ստեղծագործություններում ներկայացրել են իրանցի պարսկալեզու երիտասարդ բանաստեղծների դեմքն ու մտայնությունները: Այդ ստեղծագործությունները նա վերցրել է դոկտ. Խանլարի խմբագրած «Սոխան» (Խոսք) ամսագրի 1970-ական թվականների համարներից եւ Մոհամմադ Հողուղիի «Նոր պոեզիա» ժողովածուից, նաեւ պարբերական մամուլից:

««Նոր ալիք» դեկադենտական շարժումը պարսկական ժամանակակից պոեզիայում» վերնագրի ներքո Աշոտ Մինասյանը գրում է, որ դեռ 1940-ական թվականներին պարսկական պոեզիայում ի հայտ էին եկել բանաստեղծներ, որոնք չէին ենթարկվում տաղաչափական կանոններին: Այս շարժումը կոչվեց դեկադենտական: «Նրանք կարծում են, որ որքան խոսքը խճողված, տարօրինակ եւ զարմանալի լինի՝ այնքան էլ բանաստեղծությունը կատարյալ կդառնա»,- գրում է կազմողը:

Ա. Մինասյանը դեմ է նման ստեղծագործություններին, դրանք համարում է հիվանդագին երեւույթ, գրելով. «Նա դրսեւորում է մեր ժամանակի մտավորականության որոշ խավերի անտարբերությունը եւ, կարելի է ասել, թշնամությունը դեպի հասարակական հրատապ հարցերը... »:

Գրքում ներկայացված են նաեւ երգիծական բանաստեղծություններ:

Գրքի առանձնահատկություններից է նաեւ այն, որ զուգահեռաբար ներկայացված է նաեւ բանաստեղծությունների պարսկերեն բնագրերը:

Գիրքը Ա.Մինասյանի 40 տարիների աշխատանքի արդյունքն է: Նա փորձել է թարգմանության մեջ պահպանել բնագրի գրավիչ, գեղեցիկ եւ պատկերավոր խոսքը, բառախաղերն ու տաղաչափական նրբությունները: Այդ նպատակով նա ուսումնասիրել է Հ. Թումանյանի, Ա. Ծատուրյանի, Ա. Խնկոյանի եւ այլոց թարգմանությունները (նաեւ օտարազգի գրողների), համոզվել, որ «հայերեն ամենալավ թարգմանությունները նրանք են, որոնք ավելի լավ են հայացված»:

Թարգմանությունները նա տպագրել է տեղի եւ արտասահմանյան մամուլում, իսկ գրքով տպագրվում է առաջին անգամ: Թարգմանության ընթացքում Աշոտ Մինասյանը հարազատ է մնացել բնագրին, խուսափել բառացի թարգմանություններից եւ օտարաբանություններից, հնարավորության սահմաններում պահել բնագրի տաղաչափական առանձնահատկությունները: Գիրքը լույս է տեսել հեղինակի զավակների մեկենասությամբ:

Ազգային գրադարանի
Հանրության հետ կապերի
եւ միջոցառումների
կազմակերպման բաժին

## Արցախը նույնպես կունենա Ազգային պատկերասրահ

Այս տարի Արցախում բացվելու է Ազգային պատկերասրահ, որի նախաձեռնողը բարերար Գրիգոր Գաբրիելյանցն է: Երեկ այս մասին լրագրողներին տեղեկացրել է Հայաստանի նկարիչների միության նախագահ **Կարեն Աղամյանը**: Հիմա հստակեցվում է Ազգային պատկերասրահի շենքի տեղը: Ըստ Panorama.am-ի՝ Գրիգոր Գաբրիելյանցը Արցախում Ազգային պատկերասրահ բացելու գաղափարի մասին հայտնել է ԼՂՀ նախագահ **Բակո Սահակյանին**, եւ նա ասել է, որ կաջակցի այս հարցում: Տարիներ շարունակ Արցախն ազգային պատկերասրահ չի ունեցել, մինչդեռ մշակույթի զարգացումը շատ կարեւոր է երկրի համար:«Եթե ցանկանում ենք, որ երկիրը զարգանա, պետք է զարգացնենք ե՛ւ մշակույթը, ե՛ւ տնտեսությունը», նշել է **Գրիգոր Գաբրիելյանցը**: Իր նկարների հավաքածուն բարերարն արդեն նվիրաբերել է Արցախի ազգային պատկերասրահին: Ուրիշ անհատներ նույնպես պատկերասրահին նկարներ են նվիրել, եւ արդեն շուրջ 150 նկար է հավաքվել: Մարտիրոս Սարյանի, Մինաս Ավետիսյանի եւ հայտնի ռուս նկարիչների կտավները մարդիկ հնարավորություն կունենան տեսնելու նաեւ Արցախում: Կարեն Աղամյանի փոխանցմամբ՝ Արցախի ազգային պատկերասրահին շուրջ 100 նկար է նվիրաբերելու Հայաստանի նկարիչների միությունը: Այդ 100 նկարն այսօր ժամը 15.00-ին ցուցադրվելու են Նկարիչների միությունում: Եվս 5 նկար էլ նվիրաբերվելու է Հայաստանի մշակույթի նախարարության պահոցներից:

Ի. Պ.

ԿԱՐԾԻՔ

## Բաց նամակ ՀՀ վարչապետին ՀՀ մշակույթի նախարարին

Առանց նախաբանի ասենք, թե ինչո՞ւ, ի՞նչ նպատակով են նկարահանվում այնպիսի ֆիլմեր, ինչպիսին «Խաչագողներն են»: Այն տպավորությունն է ստացվում, որ մարդիկ ցանկանում են հային նսեմացնել, ընկճել, թեւաթափ անել: Սա դեռ հայի աչքում... Յուրաքանչյուր գործ բռնելիս պետք է մտածել նաեւ աշխարհով մեկ սփռված հայության մասին: Մի՞թե հայը չունի մի այլ արժեք, մի այլ շնորհք, մի այլ տաղանդ... Միայն խաչագող լինե՞լն է... Հայի հոգեբանության բոլոր արժեքավոր արժանիքները ծածկելով՝ բացահայտվում է միայն այն, որ հատուկ է շատ սակավաթիվ մարդկանց, որոնք ընդհանրապես զուրկ են հայի նկարագրից: Հայտնի է, որ մեծ վիպասանը իր ժամանակին, իր ժամանակակիցների կողմից նախատինքների է արժանացել միայն հենց խաչագողների համար, որովհետեւ այն գցում, ցեխոտում էր ազգի միասնությունն ու նպատակամղվածությունը: Սա էլ կարծես քիչ է, գովազդում են «ցոգոլ» գողացող պատանիների, որոնք գողությունից հետո երազանքով ու հպարտությամբ նայում են մասիսներին: Տե՜ր Աստված, այս ի՞նչ գողամոլություն է: Ո՞վ է տեսել, ո՞վ է լսել, որ գողը երազի ու հպարտանա... Միթե հնարավոր չէր, որ այդ պատանիները ծիրանի ծառի ճյուղերին նստած՝ հյութեղ ծիրան ուտելով երազկոտ նայեին մասիսներին, այնպիսի մի ինքնամոռացությամբ, որ ծիրանի հյութը ինքնահոսվեր նրանց բերաններից:

Հիմա էլ ուզում են «Հացի խնդիր» նկարահանել, Միկիտան Սաքոյին եւ Մովրովին հայտնաբերել: Ի՞նչն է դրա նպատակը: Մի՞թե այն, որ մեր մեծահարուստներն ու գործարարները Միկիտաններ են, Մովրովներ են... Ալ քեզ բա՜ն:

Փոխանակ մեր գործարարների ոգեւորող, ուրախացնող նպատակամղող ֆիլմ ցույց տան, ասենք, Մանթաշյաններ, որոնք եղել են ու կան, որ նրանց օրինակը հուզի, մտածել տա գործարարներին, որ իրենք էլ ցանկություն ունենան նրանց նմանվել: Մեր տնտեսությունը, քաղաքականությունը բազում հանգույցներով կապված է մեր գործարարների աշխատանքունակության հետ եւ պետք է նրանց թեւ ու թիկունք լինել եւ ոչ թե Միկիտան Սաքո աշխարհ բերել: Այս ի՞նչ գավառաբանություն է, այս ի՞նչ հետադիմական վարակ է: Այս ամենը այնպիսի տպավորություն է թողնում, որ ասես ինչ որ մեկը մեր լեզվով, մեր խոսքով, մեր գործով կամենում է վարկաբեկել հային, հայությանը, Հայաստանը: Առավել եւս այսօր, հայությանը պետք է համախմբող, ոգեւորող, հուսադրող հայի աչքում հային բարձրացնող, ուրախացնող, հպարտություն ներշնչող ֆիլմեր եւ ոչ թե գնալ կեղտոտ, ճահճոտ, հազար անգամ տրորված արահետներով, որտեղ արժեքավոր որեւէ բան գտնել հնարավոր չէ:

Եթե ուզում են ֆիլմ ստեղծել, թող նկարահանեն Արծրունիների տան պատմիչ Թովմա Արծրունու Քթիշ բերդի պաշտպանությունը: 9-րդ դարի կեսերին արաբական զորքերի թուրք զորահրամանատար Բուղան, որը ոտնատակ էր տվել ողջ աշխարհը, որի ահից սարսափում էին նույնիսկ հզոր պետությունների հզոր արքաները, Քթիշ բերդի ստորոտում այնպես թափեցին նրա հոշոտող ժանիքները, որ ինքնակամ թակարդն ընկած մկան նման դուրս պրծնելու ծակ էր փնտրում:

Զարմանալին այն է, որ մեր պատմավիպասանները այս գործը չեն գեղարվեստավորել: Այն «խամ ու խոպան» է եւ ֆիլմի դեպքում այն ոչ միայն նորություն կլինի, այլեւ կցուցադրի հայի վեհությունը, քաջությունը, հայ մնալու հպարտությունը, կդառնա աշխարհասփյուռ հայությանը հավաքարար ուժի կոչելու մի նոր ազդակ:

Հայ Առանշահիկ Ատոմուսե իշխանի այն նամակը, որն ուղղված էր թուրք զորահրամանատարին, մեր այսօրվա գաղափարախոսության լավագույն օրինակ է, մանավանդ որ այն հղված էր ռազմատենչության դեմ:

Ահա, այսպիսի ֆիլմ նկարահանենք, որ ամեն հայ ուրախանա, որ օտարն էլ տեսնի, զգա, ճանաչի հայի ով լինելը. նրա անպարտելիությունը, կամքը, զորությունը, տաղանդը, մարդասիրությունը, հայրենասիրությունը իր երկրի սիրով ոգեւորվածությունն ու ժողովրդի միաբան ուժի անսասանելիությունը...

Քթիշի պաշտպանության մասին ես որոշ բաներ գրել եմ իմ մի գրքում, որը հասկանալի պատճառով դեռ անտիպ է, բայց գիրքն այլ է, ֆիլմն այլ: Ֆիլմը դիտում, լսում, զգում է ողջ ժողովուրդը, նաեւ ուրիշները:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԼԹԱԿՅԱՆ
արձակագիր (գրողների միության անդամ չեմ)

## Վաստակաշատ գիտաշխատողն ու մանկավարժը

**Լրացավ գիտնական, վաստակաշատ մանկավարժ, տնտեսագետ Ֆելիքս Սիրականի Չոբանյանի ծննդյան 70-ամյակը:**

**Ֆ. Չոբանյանը ծնվել է 1941 թ. հունվարի 25-ին Վրաստանի Ախալքալաքի շրջանի Կարծախ գյուղում: Հայտնի մեխանիկ Կարապետ Չոբանյանի եղբայրն է:**



**1963 թ. ավարտելով ԵՊՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետը, իսկ 1977-ին՝ ասպիրանտուրան, Չոբանյանը գործուղումով (1963-66 թթ.) աշխատանքի է անցել ՀԽՍՀ կենտրոնական վիճակագրական վարչությունում որպես տնտեսագետ, իսկ 1967-79 թթ. անցել գիտական աշխատանքի՝ տարբեր գիտահետազոտական ինստիտուտներում՝ կրտսեր գիտ. աշխատողից հասնելով ավագ գիտաշխատողի, բաժնի վարիչի տեղակալի, ապա գիտահետազոտական լաբորատորիայի վարիչի պաշտոնի:**

**Ֆ. Չոբանյանի գիտական աշխատանքները հիմնականում նվիրված են գիտատեխնիկական առաջընթացի տնտեսական հարցերին, որոնց վերաբերյալ հրատարակել է մենագրություն եւ շուրջ 20 գիտական հոդվածներ հանրապետական գիտատեսական ամսագրերում եւ ժողովածուներում:**

**Ֆ. Չոբանյանը մասնակցել է ԽՍՀՄ Պետպլանի պլանավորման եւ նորմատիվների գիտահետազոտական ինստիտուտի մշակած գիտատեխնիկական առաջընթացի տնտեսական արդյունավետության հաշվարկման մեթոդիկայի մշակմանը, որոնք գործնական կիրառություն են գտել ժողտնտեսությունում:**

**Գիտահետազոտական աշխատանքին զուգահեռ Ֆ. Չոբանյանը մշտապես զբաղվել է նաեւ գիտամանկավարժական եւ դասախոսական աշխատանքով: Նա դասախոսել է Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտում (1978-1985 թթ.) եւ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում (1998-2010 թթ.), ինչպես նաեւ մի շարք մասնավոր բուհերում: Բազմիցս հանդես է եկել հանրապետական մամուլում եւ ռադիոյով, եղել է (1970-1990 թթ.) հանրապետական «Գիտելիք» ընկերության մեթոդ-խորհրդի վարչության անդամ եւ դասախոսություններ կարդացել հանրապետության բազմաթիվ ձեռնարկություններում ու կազմակերպություններում:**

**Մանկավարժական համալսարանում հիմնադրել է ուսանողական-հայրենագիտական հասարակական կազմակերպություն եւ արշավներ կազմակերպել հայրենի բնության տեսարժան վայրերը:**

**Ֆ. Չոբանյանը նաեւ սպորտի սիրահար է եւ անձնական օրինակ է ծառայել երիտասարդությանը, մարաթոնյան վազքի գծով մասնակցել է մի շարք միջազգային եւ միութենական մրցումների եւ գրավել մրցանակային տեղեր, արժանացել մի շարք պատվոգրերի, դիպլոմների, մեդալների եւ շնորհակալագրերի:**

**Ֆ. Չոբանյանին հատուկ է բազմակողմանի հետաքրքրասիրությունը՝ ինչպես մասնագիտական առարկաների դասավանդման, այնպես էլ գիտամանկավարժական մեթոդական աշխատանքների պատրաստման գործում: 2009 թ. հրատարակել է «Հաշվապահական հաշվառման տեսություն» մենագրությունը, որը մեծ ընդունելություն է գտել մասնագետների շրջանում:**

**Ֆ. Չոբանյանը նաեւ ընտանիքի լավ հայր է. նրա որդիները պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում բանկային եւ գործարար ոլորտներում:**

**Շնորհավորելով Ֆելիքս Չոբանյանին՝ այս հրաշալի հոբելյանի առթիվ, մաղթում ենք նրան քաջառողջություն, ընտանեկան երջանկություն եւ ստեղծագործական նոր հաջողություններ:**

ՀՈՎՀ. ԱՅՎԱԶՅԱՆ
Հայկ. հանրագիտարանի
գլխավոր խմբագիր

ԱԶԳ

# Մարզական

## Ռուբեն Հայրապետյան. «Նման հոդվածները վարկաբեկում են մեր երկիրն ու հայկական ֆուտբոլը»

Երեկ ՀՖՖ նախագահ **Ռուբեն Հայրապետյանը** մամուլի ասուլիս էր հրավիրել, որի առիթը օրեր առաջ «Ժամանակ» օրաթերթում տպագրված այն տեղեկատվությունն էր, թե Ռուսաստանը տնտեսական շահավետ առաջարկ է կատարել Հայաստանի իշխանություններին մարտի 26-ին կայանալիք ընտրական մրցախաղում ռուսներին պարտվելու դիմաց: Զգացվում էր, որ այդ հրապարակումը բավական վրդովեցրել է Ռուբեն Հայրապետյանին:




«Խաղը ռուսներին հանձնելու մասին գրված այդ հոդվածը փորձ է վարկաբեկելու մեր երկիրը, ֆուտբոլի ֆեդերացիան: Բոլորս գիտենք, որ մեր հավաքականն ընտրական այս մրցափուլում հաջող է հանդես գալիս եւ իրական հնարավորություն ունի մտնելու Եվրո-2012-ի եզրափակիչ փուլ: Նման հավաքական, որում ընդգրկված են հաղթանակի ձգտող տղաներ, երբեք չենք ունեցել: ՀՀ նախագահի գլխավորությամբ, ֆուտբոլի ֆեդերացիայի ջանքերով է վերջապես հաջողվել նման ուժեղ հավաքական ստեղծել, որով կարելի է պարծենալ:

Այսքանից հետո հոդվածներ են տպագրում ու վարկաբեկում են ինձ՝ մեղադրելով զենքի վաճառքի եւ նարկոբիզնեսի մեջ, առանց հաշվի առնելու, որ Հայաստանն ու հայկական ֆուտբոլն եմ ներկայացնում ՈՒԵՖԱ-ում եւ ՖԻՖԱ-ում: Իսկ այդ կառույցները նման մեղադրանքների, կասկածների դեպքում անպայման հետաքննություն կանցկացնեն: Դրանք կխանգարեն այդ կառույցների հետ մեր համագործակցությանը, մեր երկրի հեղինակությանը: Անցել են այն ժամանակները, երբ ֆուտբոլի ֆեդերացիայում Տեր-Պետրոսյան ազգանունով մարդ կար, կամ էլ Սուրեն Աբրահամյանն էր ղեկավարում ու խաղեր ծախում: Այս ամենն ընդդիմության, Լեւոն Տեր-Պետրոսյանի ոհմակի հերթական խարդավանքներն են: Սուտի գողականները, որ նախկինում բանտի կլյուչնիկ էին, հիմա ինչ-որ բաներ են գրում ու վախենում են հոդվածի տակ իրենց ազգանունը նշել: Եթե նրանք դեմքս տեսնեն, ինսուլտ կստանան:

19 տարվա մեջ առաջին անգամ ունենք հանրապետության այնպիսի նախագահ, որն իր անմիջական ուշադրության տակ է առել հայկական ֆուտբոլը: Եթե չլիներ նրա աջակցությունը, վաղուց էի հրաժարական տվել: Նախագահն իմ առջեւ խնդիր է դրել, որ անպայման հարկավոր է Երեւանում հաղթել Ռուսաստանի հավաքականին», նշեց ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը:

ՀՖՖ նախագահը տեղեկացրեց, որ ստիպված է դատի տալ նաեւ «Ժամանակ» օրաթերթին, ինչպես վարվել էր «Հայկական ժամանակի» պարագայում: Դատը շահելու դեպքում Ռուբեն Հայրապետյանը մտադիր է փոխհատուցման գումարն ամբողջովին տրամադրել ծերանոցներին եւ այլ կարիքավորների:

ՀՖՖ նախագահը հայտարարեց, որ ամեն ջանք ներդնում են Հայաստանի հավաքականի կազմն ուժեղացնելու համար: Այդ նպատակով բանակցում են Արագ Օզբիլիսի հետ: Վերջինս գրեթե տվել է համաձայնությունը Հայաստանի հավաքականում խաղալու: Պարզապես մի քանի օր մտածելու համար ժամանակ է պահանջել, քանի որ Հոլանդիայի հավաքականը եւս հետաքրքրված է նրանով:

Ռուբեն Հայրապետյանին առավել շատ մտահոգում է հավաքականի դարպասապահի հարցը: Նա ակումբներին խնդրել է լուրջ ուշադրություն դարձնել դարպասապահների նախապատրաստությանը, որպեսզի Ռոման Բերեզովսկուն արժանի փոխարինողներ հայտնվեն: Ըստ Հայրապետյանի, հարկավոր է ամեն կերպ աջակցել ու ոգեւորել հավաքականի ֆուտբոլիստներին, որոնք պատրաստ են իրենց ողջ ուժերը ներդնել հաջողության հասնելու համար: Նա բերեց Հենրիխ Մխիթարյանի օրինակը, որը երկարատեւ չվերթով, երեք ինքնաթիռ փոխելով պետք է Կիպրոս ժամանի: Նախագահը գլխավոր մարզչին խնդրել էր նման պայմաններում այս անգամ Մխիթարյանին չհրավիրել հավաքական: Սակայն Մխիթարյանը զանգահարել ու խնդրել է, որ անպայման մասնակցի Վրաստանի հավաքականի հետ մրցախաղին: Ի դեպ, ՀՖՖ նախագահը ցուցում է տվել, որ Կիպրոսից կազմակերպվի Հայաստան-Վրաստան ֆուտբոլային հանդիպման ուղիղ հեռարձակումը:

ՀՖՖ նախագահն իր մտահոգությունը հայտնեց «Արարատում» ստեղծված անորոշ իրավիճակի առիթով: Թիմի հովանավորները փաստորեն անուշադրության են մատնել «Արարատը», որը դեռեւս ուսումնամարզական հավաք չի անցկացրել: Նա նշեց, որ «Արարատը» բոլորի համար թանկ է եւ պետք է ստիպել հովանավորներին նորմալ աշխատել թիմի հաջողությունն ապահովելու համար:

## Թորփը վերադառնում է մեծ սպորտ

**Օլիմպիական խաղերի հնգակի չեմպիոն, ավստրալացի հանրահայտ լողորդ Յան Թորփը հնգամյա ընդմիջումից հետո որոշել է վերսկսել ելույթները: Նա մտադիր է մասնակցել 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերին:**

**Թորփը մեծ սպորտին հրաժեշտ էր տվել 2004-ի Աթենքի ամառային օլիմպիադայից հետո: Ճիշտ է, 2005-ի դեկտեմբերին նա մասնակցեց Ուելսի առաջնությանը 200 մ լողում, որից հետո հայտարարեց, որ իր հիմնական ուշադրությունը դարձնելու է 100 մ լողին: Սակայն նրա արդյունքները գոհացուցիչ չէին, ուստի Թորփը վճռեց դադարեցնել ելույթները: 2006-ին տեղափոխվելով ԱՄՆ, հանրահայտ լողորդը սկսեց մասնակցել զանազան շոուների, աշխատեց որպես մարզական մեկնաբան:**

**Ինչպես երեւում է, նման կյանքը ձանձրացրել է Թորփին, որը Սիդնեյում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց սպորտ վերադառնալու իր որոշման մասին:**



**«Ես մարզական փայլուն կարիերա եմ ունեցել, ուստի վերադառնալու մասին որոշումն ինչ-որ չափով ռիսկի հետ է կապված: Իհարկե, ավելի հեշտ կլիներ նստել տանն ու ոչինչ չձեռնարկել: Սակայն լողում դեռեւս կան բարձունքներ, որոնք չեմ նվաճել: Աշխատելով BBC-ում, տեսել եմ այն լողավազանը, որում անցկացվելու են 2012-ի ամառային օլիմպիադայի լողի մրցումները: Դա մի անբացատրելի զգացում էր», նշել է Թորփը:**

**Նշանավոր լողորդը բավական խոշոր գումարներ է աշխատել նաեւ գովազդային տարբեր պայմանագրերից: Թեեւ ըստ մարզիկի, ինքն էլ ֆինանսապես տուժել է ճգնաժամից: Սակայն գումար վաստակելու ձգտումը չէ, որ նրան մղել է վերսկսել ելույթները: Այս լուրն ուրախացրել է նաեւ Ավստրալիայի լողի հավաքականի գլխավոր մարզիչ Լի Նյուջենտին:**

**Թորփը 2000-ի ամառային օլիմպիադայում հարազատ Սիդնեյում 3 ոսկե մեդալ է նվաճել: Չորս տարի անց Աթենքում նրա մեդալների հավաքածուն համալրվեց օլիմպիական եւս 2 ոսկե պարգեւով: Բացի այդ, նա 13 անգամ հաղթող է ճանաչվել աշխարհի առաջնություններում:**

## Իվանչուկը մոտ է հաջողությանը

Ուկրաինացի գրոսմայստեր Վասիլի Իվանչուկը Ջիբրալթարի մրցաշարի նախավերջին՝ 9-րդ տուրում հաղթելով Ֆաբիանո Կարուանային, վաստակեց 8 միավոր եւ գլխավոր մրցանակին տիրելու լուրջ հայտ ներկայացրեց: Նրան կես միավոր է զիջում անգլիացի գրոսմայստեր Նայջլ Շորթը, որը հաղթեց Վիկտոր Միխայլեւսկուն: Ավարտական տուրում Իվանչուկը սպիտակներով մրցելու է Դանիել Ֆրիդմանի հետ, իսկ Շորթը սեւերով խաղալու է Վիկտոր Բոլոգանի հետ:

Վարուժան Հակոբյանը սեւերով հաշտություն կնքեց Աննա Զատոնսկիխի հետ ու 5,5 միավորով 39-րդ տեղում է:

## Պակյաոն դեռ վեց մենամարտ պետք է անցկացնի

**Top Rank պրոմոութերական ընկերության ղեկավար Բոբ Արումը հայտարարել է, որ անկախ քաշային կարգից աշխարհի լավագույն բռնցքամարտիկներից մեկը՝ ֆիլիպինցի Մենի Պակյաոն մինչեւ 2013-ը եւս 6 մենամարտ կանցկացնի՝ տարեկան ռինգ դուրս գալով 2 անգամ: Այս մասին Արումին հայտնել է Պակյաոն:**

**Առաջիկա մենամարտը ֆիլիպինցին կանցկացնի մայիսի 7-ին քաշային 3 կարգերում աշխարհի նախկին չեմպիոն, ամերիկացի Շեյն Մոզլիի հետ: Հաջորդ անգամ Պակյաոն ռինգ դուրս կգա այս տարվա սեպտեմբերին կամ հոկտեմբերին:**

### ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ երիտասարդական հավաքականի մրցակիցները հայտնի են

**Երեկ Շվեյցարիայի Նիոն քաղաքում կայացավ ֆուտբոլի 2013-ի Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարի մասնակիցների վիճակահանությունը: Հայաստանի երիտասարդական հավաքականն ընդգրկվեց ընտրական 3-րդ խմբում, որտեղ մեր ֆուտբոլիստների մրցակիցներն են Չեխիայի, Ուելսի, Չեռնոգորիայի եւ Անդորրայի ընտրանիները:**

**Վիճակահանությամբ մասնակից 52 հավաքականները բաժանվեցին 10 խմբի: Դրանցից 2-ում ընդգրկվեցին 6-ական, 8-ում՝ 5-ական հավաքականներ: Եզրափակիչի 7 ուղեգրերի համար կպայքարեն 10 խմբերի հաղթողները եւ 2-րդ տեղ գրաված հավաքականներից լավագույն արդյունքի հասած 4 ընտրանիները, որոնք վիճակահանությամբ զույգեր կկազմեն ու անցումային խաղեր կանցկացնեն: 2013-ի Եվրոպայի երիտասարդական առաջնության եզրափակիչ փուլի հանդիպումները տեղի կունենան Իսրայելում այդ տարվա հունիսին: Իսկ ընտրական մրցաշարի հանդիպումները կսկսվեն այս տարվա մարտի 25-ին:**

**Ինչպես հայտնի է, Հայաստանի երիտասարդական հավաքականն առայժմ մարզիչ չունի: Նախորդ ընտրական մրցաշարի ավարտից հետո երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ, դանիացի Ֆլեմինգ Սերիցլեւը մեկնեց Հայաստանից՝ ընդունելով հրավերն Իրանից: ՀՖՖ-ն ներկայումս բանակցում է մի քանի մարզիչների հետ: ՀՖՖ նախագահը խոստացել է վիճակահանությունից հետո դրական լուծում տալ գլխավոր մարզչի ընտրության հարցին:**

## Լիլիթ Գալոյանը միջին դիրքերում է

**Մոսկվայի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում Լիլիթ Գալոյանը հաշտություն կնքեց Մարիա Ֆոմինիխի հետ եւ 2,5 միավորով ընթանում է 5-րդ տեղում: 4-ական միավորով աղյուսակը գլխավորում են Բատուլյագ Մոնգոնտուլն ու Վալենտինա Գունինան: Մոնգոնտուլը հաղթեց Կարինա Համբարձումովային, որը 4-րդ պարտությունը կրեց: Գունինան առավելության հասավ Օլգա Գիրյայի նկատմամբ:**

**Առաջատարներին կես միավոր զիջող աշխարհի նախկին չեմպիոնուհի Ալեքսանդրա Կոստենյուկը հաղթեց Չժան Սյուեին: Զավադսկայա-Կաշլինսկայա պարտիան ավարտվեց ոչ-ոքի:**

## Նահապետյանն անդրանիկ պարտությունը կրեց

**Մոսկվայում ընթացող շախմատի ուսանողական մրցաշարի առաջատար Պողոս Նահապետյանը, որ մեկնարկում 4 անընդմեջ հաղթանակ էր տոնել, 5-րդ տուրում առաջին պարտությունը կրեց՝ սեւերով զիջելով Ալեքսանդր Խարիտոնովին: Հայ շախմատիստի անհաջողությունը հնարավորություն ընձեռեց Խարիտոնովին եւ Իվան Պոպովին 4,5-ական միավորով գլխավորելու աղյուսակը: Նահապետյանը 4 միավորով 3-րդ տեղում է: Պոպովը հաղթեց Վլադիսլավ Նոզդրաչովին: 6-րդ տուրում Նահապետյանը կխաղա Պավել Պոնկրատովի հետ:**

## Ուժեղագույնների թվում միայն «Փյունիկն» է

**Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան հրապարակել է աշխարհի ուժեղագույն 400 ակումբների ցանկը, որում հաշվի են առնված թիմերի ցուցանիշները 2010-ի փետրվարի 1-ից 2011-ի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում:**

**Հայաստանն այդ ցանկում ներկայացնում է միայն երկրի բազմակի չեմպիոն «Փյունիկը», որը 65 միավորով 349-րդ տեղում է: Դասակարգման ցուցակը շարունակում է գլխավորել իտալական «Ինտերը»: Լավագույն տասնյակում են նաեւ «Բարսելոնը», «Բավարիան», Մադրիդի «Ռեալը», «Լիվերպուլը», բրազիլական «Ինտերնասիոնալը», արգենտինական «Էստուդիանտեսը», «Պորտոն», «Մանչեսթր Յունայթեդն» ու Մադրիդի «Ատլետիկոն»:**

**Աշխարհի ուժեղագույն ակումբների ցանկը հրատարակվում է ամեն ամիս 1991-ից սկսած: Առայժմ բոլորից հաճախ՝ 37 անգամ ուժեղագույնների ցուցակը գլխավորել է իտալական «Միլանը»: 33 անգամ ուժեղագույնն է ճանաչվել «Մանչեսթր Յունայթեդը», 31 անգամ՝ «Բարսելոնը»: «Ինտերը» 4-րդ տեղում է: Իտալական թիմը 21 անգամ է գլխավորել դասակարգման ցուցակը:**

## Զույգերը որոշվեցին

«Կիլիկիայի» լուծարումից հետո Հայաստանի ֆուտբոլի գավաթի խաղարկության ցանկում մասնակի փոփոխություն կատարվեց: Վիճակահանությամբ «Ուլիսին» բաժին ընկավ նոր մրցակից՝ Երեւանի «Արարատը»: Իսկ «Փյունիկը» քառորդ եզրափակիչում կմրցի «Շիրակի» հետ:

## Եզրափակիչում՝ «Ռեալն» ու «Բարսելոնը»

**Հայտնի դարձան ֆուտբոլի Իսպանիայի գավաթի խաղարկության եզրափակիչի մասնակիցները: Պատվավոր մրցանակը կվիճարկեն երկրի ամենահեղինակավոր թիմեր «Ռեալն» ու «Բարսելոնը»: Այնպես որ ֆուտբոլասերները եւս մեկ սուպերկլասիկոյի ականատես լինելու հնարավորություն կունենան:**

**Կիսաեզրափակիչում Մադրիդի «Ռեալն» առավելության հասավ «Սեւիլիայի» նկատմամբ: Մրցակիցների առաջին խաղում հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթել էր «Ռեալը»: Մադրիդի «Սանտյագո Բեռնաբեու» մարզադաշտում կրկին հաջողությունն ուղեկցեց դաշտի տերերին: Ճիշտ է, հաշիվը բացվեց միայն 82-րդ րոպեին Օզիլի հարվածի շնորհիվ: Ավելացված ժամանակում աչքի ընկավ «Ռեալի» նորեկ Ադեբայորը՝ ամրապնդելով թիմի հաղթանակը:**

**«Բարսելոնը» դեռեւս առաջին խաղից հետո էր ապահովել եզրափակիչի ուղեգիրը՝ սեփական հարկի տակ 5-0 հաշվով ջախջախելով «Ալմերիային»: Պատասխան խաղում էլ, թեեւ «Բարսելոնը» խաղաց 2-րդ կազմով, կատալոնական ակումբը 3 անպատասխան գնդակ խփեց: Աչքի ընկան Ադրիանոն, Տյագոն եւ Աֆելայը:**

**Գավաթի եզրափակիչ հանդիպումը կկայանա ապրիլի 20-ին: Առայժմ մրցավայրը հայտնի չէ: Հավանական է, որ վճռորոշ խաղն անցկացվի Սեւիլիայի «Մեստալյա» մարզադաշտում, որը 55 հազար նստատեղ ունի: Ամենահամեստ հաշվարկներով սուպերկլասիկոն Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիային 15 մլն եվրոյի եկամուտ կապահովի:**

**«Բարսելոնը» 35 անգամ հանդես է եկել գավաթի եզրափակիչում ու 25 անգամ նվաճել է գավաթը: «Ռեալը» վերջին անգամ գավաթակիր է դարձել 1993-ին, իսկ եզրափակիչում խաղացել է 7 տարի առաջ՝ զիջելով «Սարագոսային»: Վերջին անգամ «Ռեալն» ու «Բարսելոնը» գավաթը վիճարկել են 1990-ին: 2-0 հաշվով հաղթել է «Բարսելոնը»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Հայերը ենթարկվում են «կրկնակի» թրաֆիկինգի

### *Աշխատավարձն ուշացնում են, ենթարկում հարկադիր աշխատանքի*

Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (ՀԳՀՄ) Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) աջակցությամբ գործատուների համար «Վարքագծի կանոնակարգ» է մշակել: Այն հետագայում կլրացվի գործատուների «Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կանոնակարգ»-ի մյուս անհրաժեշտ բաղադրիչներով եւ կընդունվի ամբողջությամբ: Կանոնակարգը հիմնականում ներառում է հարկադիր աշխատանքի եւ թրաֆիկինգի կանխարգելման ու կանոնակարգի իրականացման սկզբունքները:

Ներկայացված սկզբունքները վերցված են ՀՀ օրենսդրությունից եւ իրավական այլ ակտերից, ՄԱԿ-ի կոնվենցիաներից եւ առաջարկություններից` ներառելով աշխատանքի հիմնարար սկզբունքների եւ իրավունքների հռչակագիրը եւ սոցիալական քաղաքականությունը:

«Սա գործող օրենսդրության լրացում եւ միջազգային նորմերի տեղայնացում է, որը կամավորության սկզբունքով պետք է ընդունեն գործատուները` կանխարգելելով իրենց ձեռնարկություններում հարկադիր աշխատանքը», ներկայացնելով կանոնակարգը ասաց ՀԳՀՄ-ի նախագահ **Արսեն Ղազարյանը**` հավելելով, որ հարկադիր աշխատանքը կախվածությունն է վճարող գործատուից, ոչ մարդկային պայմաններում աշխատողներ պահելը, հարկադրելը հատուկ ռեժիմով աշխատելու, գործատուի ցանկությամբ աշխատանքից ազատելը կամ ընդունելը, հոգեբանական բարդույթներ ստեղծելը, մարդուն ստորացնելը:

2009 թ. ԱՄԿ-ի տվյալների համաձայն` հարկադիր աշխատանքից գոյացած տարեկան հասույթը աշխարհում կազմել է 21 մլրդ դոլար: ԱՄԿ Կովկասի տարածաշրջանի հիմնական տեխնիկական մասնագետ **Ժուլտ Դուդասի** փոխանցմամբ` գումարի 80 տոկոսը գոյացել է այն գումարներից, որոնք կստանային այն մարդիկ, եթե աշխատեին սովորական, ոչ հարկադիր աշխատանքի ձեւաչափով, նաեւ սննդի համար չհատկացումների եւ մնացած այն գումարները, որ կապված են հարկադիր աշխատանքին:

Դոդասի մեկնաբանությամբ` տարբեր ոլորտներ տարբեր չափով են խոցելի համարվում: Ամենախոցելիների շարքին են դասվում գյուղատնտեսությունը, թեթեւ արդյունաբերությունը, շինարարությունը եւ զբոսաշրջությունը: Եթե արտաժամյա աշխատանքի դիմաց չվճարելը զարգացած երկրներում անվանում են ներքին թրաֆիկինգ, ապա Հայաստանում բացի հարկադիր աշխատանքից, աշխատավարձերն էլ ուշացնում են, իսկ եթե դժգոհում ես, դառնում ես տնօրենի աչքի գրողն ու ընկնում սեւ ցուցակի մեջ: Ստացվում է, որ հայերը մի քանի անգամ ենթարկվում են աշխատանքային թրաֆիկինգի: Այս առումով նման կանոնակարգի մշակումը չափազանց կարեւոր է, սակայն մտահոգիչ է, թե կանոնակարգն ինչպես եւ ինչպիսի մեխանիզմով կաշխատի:

Գործատուները կարող են ճանաչել վարքագիծը, բայց գործնականում չկիրառել: Բացի այդ ո՞վ է հետեւելու, գրանցելու, թե ո՞ր աշխատակիցն է արտաժամյա աշխատել ու որքան պետք է վճարել արտաժամյա աշխատանքի համար:

Գաղտնիք չէ, որ հաճախ բժշկին, մանկավարժին, գրասենյակային աշխատողներին հարկադրում են արտաժամյա աշխատել հանգստյան եւ տոն օրերին: Արտաժամյա հարկադիր աշխատանքի են ենթարկվում հատկապես հյուրանոցային ոլորտի աշխատակիցները:

«**Ազգ**» օրաթերթն անցյալ տարի «Ծաղկաձորը նորահարսների հանգստի քաղաք» հոդվածում անդրադարձել էր հյուրանոցային բիզնեսին: Մեր այցելած բոլոր հյուրանոցներում սպասարկող անձնակազմը փաստեց, որ ամանորյա օրերին աշխատել են առանց գրաֆիկի, առանց հերթափոխության, սակայն դրա դիմաց որեւէ հավելյալ վարձատրություն չեն ստացել, մինչդեռ հյուրանոցների սեփականատերերն այդ օրերին գերշահույթ են ստացել` անտեսելով իրենց աշխատակիցների իրավունքները:

Նման օրինակները բազմաթիվ են, եւ անհրաժեշտ է այս խնդիրներին դրական լուծում տալ ու նաեւ պարտադրել գործատուին` հարգել աշխատողների իրավունքը: Իհարկե, աշխատողն էլ պետք է ստիպի, որ հարգեն իր իրավունքներն ու ոտնահարման դեպքերի մասին բարձրաձայնի, սակայն այստեղ հանդիպում ենք սոցիալական խնդրի: Եթե մանկավարժն իր 80.000 դրամ աշխատավարձով ընտանիք է պահում ու գիտակցում է, որ մի երկու «ավելորդ» արտահայտության պարագայում կհայտնվի փողոցում, բնականաբար կնախընտրի լռել ու առանց վճարման արտաժամյա աշխատել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱԿԻՐՃ

# Արցախում են մի խումբ արտասահմանցի գործարարներ

**Մինչ հարեւան երկրի ղեկավար Իլհամ Ալիեւն անձամբ հորդորում է «աշխարհի ադրբեջանցիներին»` բոյկոտել արցախյան արտադրության պահածոները, Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը, ինչպես հայտնում են Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունից, ընդունում է Սլովակիայից, Ավստրիայից եւ Չեխիայից ժամանած գործարարների:**

**Երեկ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են Արցախում տարբեր ծրագրերի իրականացման հարցեր:**

**Հատուկ ուշադրություն է հատկացվել էներգետիկայի, գյուղատնտեսության եւ շինարարության ոլորտներին, ինչպես նաեւ կադրերի պատրաստման ու վերապատրաստման հարցերին:**

**Երկրի ղեկավարը նշել է, որ Արցախը շահագրգռված է արտերկրից ժամանակակից տեխնոլոգիաների ու ներդրումների ներգրավման եւ փոխշահավետ համագործակցության մեջ, ինչի համար երկրում ստեղծված են բոլոր պայմանները:**

**Հանդիպմանը մասնակցում էին փոխվարչապետ, ֆինանսների նախարար Սպարտակ Թեւոսյանը, պաշտոնատար այլ անձինք: Հ. Ա.**

# «Կովկասյան մարտահրավեր» ավտոարշավը կմեկնարկի օգոստոսի 15-ին

«Ավտոսպորտի սիրահարներին հիանալի առիթ է ընձեռվում հակամարտություններով տագնապած, բայց մշակութապես հարուստ տարածաշրջաններ այցելելու եւ նորանոր տվյալներ հայտնաբերելու 17 օրում», ասված է այդ առթիվ Աիթլա Բերենյիից ստացված հաղորդագրության մեջ:

Հունգարիայից օգոստոսի 15-ին սկսելով` ավտոարշավի մասնակիցները (առանց տարիֆային սահմանափակման) անցնելու են Խորվաթիայով, Բոսնիա-Հերցեգովինայով, Չեռնոգորիայով, Կոսովոյով եւ Ալբանիայով նախքան Բալկաններից դուրս գալը եւ ճանապարհը շարունակելով Հունաստանով ու Թուրքիայով, նրանք մտնելու են Վրաստան, Լեռնային Ղարաբաղ եւ ավարտելու են իրենց արշավը Երեւանում օգոստոսի 31-ին:

Ավտոարշավը չի հետապնդում որեւէ ռեկորդային սահմանում: Նպատակը նոր վայրերի ու ընկերների ձեռքբերումն է եւ հետաքրքրական ժամանցը: Նաեւ բարեգործական առաքելությունը: Մասնակիցները, այցելելով այդ տարածքներում գտնվող մանկական եւ դպրոցական հիմնարկներ, երեխաներին են փոխանցում խաղալիքներ, հագուստներ եւ գրենական պիտույքներ:

Անցած երեք տարիների ընթացքում ավտոարշավը, որի կազմակերպիչն է «Չենայի Իվենտ Մենեջմենտ սերվիսիզ» ընկերությունը, մեծ հաջողություն է արձանագրել եւ խոստանում է այս տարի էլ լինել հետաքրքրական արկածային սպորտի սիրահարների համար:

Հ. Ծ.

www. azg.am

AMERIABANK

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ք. Երեւան, Նոր Նորք վարչական շրջանում անհրաժեշտ է տարածք «Ամերիաբանկ» ՓԲԸ մասնաճյուղ բացելու համար**

**Վարձակալվող տարածքի անհրաժեշտ չափանիշները`**

- Տարածքը պետք է գտնվի Գայի պ. եւ Նանսենի փ. խաչմերուկից մինչեւ Գայի պ., Բաղյան փ. եւ Ա. Հովհաննիսյան փ. խաչմերուկ հատվածում:
- Տարածքը պետք է լինի առանձին շինություն կամ գտնվի շենքի առաջին հարկում, մայթի հարթության մակարդակից ոչ ցածր:
- Տարածքի ընդհանուր չափը` 250 - 300 քմ
- Առաստաղի բարձրությունը` առնվազն 3 մ
- Ճակատային հատվածում անհրաժեշտ է առնվազն երեք վիտրաժի առկայություն, մուտք փողոցի կողմից, ցանկալի է պահեստային դուռ բակի կողմից:
- Ցանկալի է նկուղ` ոչ պակաս քան 30 քմ, առաստաղի բարձրությունը ոչ պակաս քան 2,70 մ, մուտք դեպի նկուղ` առաջին հարկից:
- Տարածքի դիմացը ավտոմեքենաների կայանատեղի առկայությունը պարտադիր է:

**Պահանջվող փաստաթղթեր**

- նամակ-առաջարկ` նշելով ակնկալվող ամսական վարձավճարի չափը, տարածքի համառոտ նկարագրությունը,
- տարածքի սեփականատիրոջ կոնտակտային տվյալները,
- անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը,
- լուսանկարներ, որոնք հստակ կբնորոշեն տարածքի գտնվելու վայրը:

Փաստաթղթերն ուղարկել **setup@ameriabank.am** էլ. հասցեով կամ փակ ծրարով հանձնել «Ամերիաբանկ» ՓԲԸ, Տարածքային ստորաբաժանումների ձեւավորման բաժին, հասցե` ք. Երեւան, Գ.Լուսավորչի 9 մինչեւ 2011թ. փետրվարի 5-ը:

***Տարածքների նախնական ընտրության ժամանակ հաշվի է առնվելու 1 քմ համար առաջարկվող վարձավճարի համադրելի գումարը:***
***Առաջարկություններ հեռախոսազանգերով չեն ընդունվում:***

AMERIABANK

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ք. Երեւան, Շենգավիթ վարչական շրջանում անհրաժեշտ է տարածք «Ամերիաբանկ» ՓԲԸ մասնաճյուղ բացելու համար**

**Վարձակալվող տարածքի անհրաժեշտ չափանիշները`**

- Տարածքը պետք է գտնվի Գ.Նժդեհի հրապարակում, Գ. Նժդեհ եւ Նիզամի փողոցների խաչմերուկից մինչեւ Գ.Նժդեհի հրապարակ, Գ.Նժդեհի հրապարակից մինչեւ Բագրատունյաց պ. եւ Չեխովի փ. խաչմերուկ հատվածներում:
- Տարածքը պետք է լինի առանձին շինություն կամ գտնվի շենքի առաջին հարկում, մայթի հարթության մակարդակից ոչ ցածր:
- Տարածքի ընդհանուր չափը` 250 - 300 քմ
- Առաստաղի բարձրությունը` առնվազն 3 մ
- Ճակատային հատվածում անհրաժեշտ է առնվազն երեք վիտրաժի առկայություն, մուտք փողոցի կողմից, ցանկալի է պահեստային դուռ բակի կողմից:
- Ցանկալի է նկուղ` ոչ պակաս քան 30 քմ, առաստաղի բարձրությունը ոչ պակաս քան 2,70 մ, մուտք դեպի նկուղ` առաջին հարկից:
- Տարածքի դիմացը ավտոմեքենաների կայանատեղի առկայությունը պարտադիր է

**Պահանջվող փաստաթղթեր**

- նամակ-առաջարկ` նշելով ակնկալվող ամսական վարձավճարի չափը, տարածքի համառոտ նկարագրությունը,
- տարածքի սեփականատիրոջ կոնտակտային տվյալները,
- անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը,
- լուսանկարներ, որոնք հստակ կբնորոշեն տարածքի գտնվելու վայրը:

Փաստաթղթերն ուղարկել **setup@ameriabank.am** էլ. հասցեով կամ փակ ծրարով հանձնել «Ամերիաբանկ» ՓԲԸ, Տարածքային ստորաբաժանումների ձեւավորման բաժին, հասցե` ք. Երեւան, Գ.Լուսավորչի 9 մինչեւ 2011թ. փետրվարի 5-ը:

***Տարածքների նախնական ընտրության ժամանակ հաշվի է առնվելու 1 քմ համար առաջարկվող վարձավճարի համադրելի գումարը:***
***Առաջարկություններ հեռախոսազանգերով չեն ընդունվում:***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 3.2.2011, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: